№ 29 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՓԵՏՐՎԱՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՓԵՏՐՎԱՐԻ № 29

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
10 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ի տեղեկութիւն ծխողների!

«ԵՂԲ. ՄԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ» Առևտրական Տան ծխախոտի նոր գործարանը բաց է թողել հետևեալ բարձր տեսակի պապիրոսներ.

ПРИМА {
25 հատը 30 կոպ.
25 հատը 25 կ. և 10 հատը 10 կոպ.
25 հատը 15 կ. և 10 հատը 6 կոպ.

Зефиръ և Деликатныя } 25 ՀԱՏԸ 15 ԿՈՊ. և 10 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.

Восходъ և Реформа—10 հատը 5 կոպ.

Араксъ—10 հատը 3 կոպ. Марсъ—20 հատը 5 կոպ.

Խնդրում ենք փորձել: Ծախվում է ամենուրեք:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
„ԵՂԲ. ՄԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ"

(Ե. Հ. Կ.) (տռ.) 155. 25—1

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Երկուշաբթի, փետրվարի 15-ին
Տեղի կունենայ յօբելեանական ներկայացում

Ի ՊԱՏԻՒ
ՏԻԿԻՆ Վ. ՄԵԼԻՔԵԱՆԻ
25-ԱՄԵԱՅ ԲԵՄԱԿ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

I
ՊԷՊՕ
Բ. գործողութիւն
Մասնակցում են.—Տ. Մելիքեան, պ. պ. Ա. Զարգարեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Յարութիւնեան, և այլք:

II
(Վրացերէն լեզուով)
ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ՊԱՇՏՕՆ
Դ. գործողութիւն
Բարեհաճ մասնակցութեամբ—տ. տ. Մելիքեանի, Գաբունիա-Ցագարելիի, Տասօ Աբաշիձէի եւ պ. Գվարաձէի:
Ռէժիսեօր՝ Կ. Մեսխի

III
Յօբելեանական հանդէս

IV
ԻՐԱՒԱԶՈՒՐԿ ԿԻՆԸ
Դ. գործողութիւն
Մասնակցում է ամբողջ խումբը:
ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ Է
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին
Ռէժիսեօր՝ Օ. Մայսուրեան

Որովհետև տոմսակների մեծ պահանջ կայ, ուստի վաղօրօք ցանկացողները կարող են գրվել Արտիստական Թատրօնի կասսայում:

Ողերձների և շնորհաւորութիւնների համար մինչև փետրվարի 12-ը պիտի յայտնել բժ. Ա. Զարգարեանցին (Сергѣевская, д. Саркисова).

Յօբելեանական մասնաժողովի նախագահ՝ Ա. Զարգարեան:

Անդամներ՝ Տ. տ. Ե. Ռոստոմեան, Վ. Աղամալեան, Ն. Գաբունիա-Ցագարելի, իշխ. Ն. Երիստով, իշխ. Կ. Մակաեվ, պ. պ. Տ. Յովհաննիսեան, Մ. Զաքար, Մ. Աթաբէգեան, Խր. Տէր-Սարգսեան և Ա. Յարութիւնեան:

(Ե. Հ.) (տռ.) 150. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, փետրվարի 9-ին
Տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՀԱՄԵՐԳ 2 բաժանմունքից՝ մասնակցութեամբ տ. տ. Քալանթարեանի, Մարցինկևիչի, Գավրիշեվայի, Սարմատովայի, Չիմպլիցկայի, Դիդէնկօյի, պ. պ. Սարմատովի, Գանէլի, Գլէբովի, Զարովի և Փոլտավցևի:

Երեկոյթին կը նուագեն լարանուագների խումբը և սազանդարներ:

Համերգից յետոյ ՊԱՐԵՐ
Մօլօրօսիական, եւրոպական և կովկասեան:

Համերգի տոմսակները՝ 30—75 կ. արժող. ծախվում են Ժողովարանի շվէյցարի մօտ:

Հիւրերը՝ ընդհանուր հիմունքների համաձայն մուտքի համար վճարում են 1 րուբ.:

Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին:

տռ. (Կ. Ե.) 151. 2—2

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մենք ասացինք, որ հայ ընթերցողի համար աղքատ է այն գրադարանը, որ նրան տալիս է մեր ընթացիկ հրատարակչական գործը:

Եւ հայ ընթերցողը, որ կը ցանկանար ունենալ իր տրամադրութեան տակ նորանոր նիւթեր ընթերցանութեան համար, անկարող է բաւարարութիւն տալ իր այդ ցանկութեանը և պահանջին:

Ասել՝ թէ մեզանում գրքեր չեն հրատարակվում՝ չէ կարելի: Նրանք որոշ թւով կան, նրանք ժամանակ առժամանակ լոյս են տեսնում, և լրագրական ժամանակագրութիւնը յիշատակում է նրանց երևալու մասին: Բայց այդ գրքերի մեծագոյն մասը չէ ծառայում հասարակ ընտանեկան ընթերցանութեան նպատակներին:

Եւ առհասարակ պէտք է նկատել, որ յատուկ ուշադրութեան չէ առնված հայ ընթերցողին բաւարարութիւն տալու հոգացողութիւնը:

Եթէ մասնաւոր հրատարակչական նախաձեռնութիւնը կամ նորակազմ Հրատարակչական Ընկերութիւնը վերցնէին իրանց վրա այդ հոգացողութիւնը և մի քանի տարի շարունակ տային օգտաւէտ և հետաքրքրական ընթերցանութեան նիւթ, անշուշտ նրանք կը սկսէին կապել ընթերցող հասարակութիւնը հրատարակչական այդ մարմինների հետ և դարձնել նրանց գործունէութիւնը հաստատուն և արդիւնաբեր:

Եւ մենք կարող կը լինէինք այն ժամանակ մշտապէս տեսնել հայ ընթերցողի սեղանի վրա մէկը միւսին յաջորդող գրքեր, ինչպէս այդ տեղի ունի ուրիշ երկրներում:

Մեզանում տեսնել ընդհանուր ընթերցանութեան գիրք ընտանեկան սեղանի վրա՝ մի հազւագիւտ երևոյթ է: Հազարից մէկ կերևայ մի հրատարակութիւն, որը կը յիշեցնի հայ գրքի գոյութեան գաղափարի մասին, կերևայ, որպէսզի յետոյ երկար ժամանակ չունենայ իր յաջորդը կամ իր ժառանգը նոյն սեղանի վրա:

Պէտք է նկատել, որ հայ հրատարակչութիւնը երբեմնապէս մի որոշ չափով փորձեր արել է տալու հետաքրքրաշարժ և առողջ ընթերցանութեան նիւթ և ունեցել է մասնաւոր աջողութիւն: Ռուսահայ հրատարակչական պատմութեան այն էջը, որ պատկանում է նախկին Հրատարակչական Ընկերութեան վերջին տարիների գործունէութեանը, մատակարարում է մեզ փոքր ի շատէ նպատակայարմար նիւթ բարեյաջող և նպաստաւոր եզրակացութիւնների համար: Ընկերութիւնը տալիս էր վերջին տարիները 10—15 գիրք տարեկան բազմատեսակ բովանդակութեամբ և թէև չէր սպառում գրքերի իր բոլոր պաշարը, այնուամենայնիւ բաւական մեծ թւով նրանց տարածում էր ժողովրդի մէջ:

Թիւրքահայ հրատարակիչներն աւելի պարզօրէն նայեցին գործին և նրանցից մի քանիսը ձեռնարկեցին եւրոպական վիպագրողների այնպիսի երկերի հրատարակութեան, որոնք կամ մեծ անուն են հանել համաշխարհային գրականութեան մէջ, ինչպէս օրինակ Վիկտոր Հիւգոյի երկասիրութիւնները, կամ չափազանց գրաւեցնում են ընթերցողների ուշադրութիւնը իրանց մէջ պարունակած արկածքների նկարագրութիւններով: Այս վերջին տեսակի երկերը երբեմն լինում էին կասկածելի արժանիքի և բովանդակութեան գործեր և անկասկած դրանով վարկաբեկվում էին ժողովրդական գրադարանի անունը. բայց մեզ համար ներկայ դէպքում ուսանելի է այն, որ գիրքը կարող է հետաքրքրութիւն շարժել հասարակութեան խաւերում և դառնալ մշտական պահանջի առարկայ:

Անշուշտ՝ հրատարակիչ մարմինը պէտք է առանձին հոգ տանի, որ նրա տուած գրքերը հետաքրքրաշարժութեան հետ միասին նաև լինեն ազատ՝ սայթաքուն և ճահճային բնաւորութիւն կրելուց և ունենան գեղարւեստական կամ կրթական արդարացում: Եւ սակաւ չէ այդպիսի գրքերի թիւը:

Եւրոպական գրադարանն ամէն օր հարստանում է առատ գրական նիւթերով և ընտրողի համար կայ անսպառ մի աղբիւր, միայն թէ գիտենայ նա որոնել և ընտրել:

Մենք չենք երաշխաւորի, թէ մեր ասած հրատարակչական ձեռնարկութիւնները հէնց իրանց առաջին քայլերից կընդունվեն գրկաբաց և կունենան անպայման աջողութիւն, բայց լիայոյս ենք, որ խելացի կազմակերպված հրատարակչական գործը մի քանի տարի նեղութիւններ կրելուց յետոյ կը գտնի ամուր հող իր գոյութեան և զարգացման համար:

Այո, անհրաժեշտ են նախնական քայլեր, որոնք բանան ճանապարհ աւելի ապահով և հաստատ հրատարակչական գործունէութեան համար:

Ա. Քալանթար

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԻՒՐԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Պետերբուրգ, 6 փետրվարի

Կէսօրին, ժ. 2 և 30 րոպէին, ֆրանսիացի պարլամենտականները բարօն Դէստուրնէլ-դը-Կօնստանի առաջնորդութեամբ ընդունվեցին Կայսրից Ցարսկօէ Սէլօյում Ալէքսանդրեան պալատի մէջ: Միաժամանակ պալատ եկաւ ֆրանսիական դեսպան Լուիին: Կայսրը ողորմածաբար խօսակցեց պատգամաւորների հետ:

Յետոյ Նորին Մեծութիւնը բարեհաճեց գնալ իր առանձնարանը, իսկ ֆրանսիացի հիւրերին պալատի սենեակներից մինում առաջարկվեց թէյ, որից յետոյ նրանք մեկնեցին Արքայական պավիլիօնը պալատական կառքերով, յետոյ՝ Պետերբուրգ:

Ժամը 5-ին պատգամաւորները եկան Տաւրիկեան պալատը և Դումայի նախագահի ընդունարանում ընդունվելուց յետոյ մասնակցեցին ռուսաց միջպարլամենտական խմբակի նիստին: Նախագահ Եֆրեմօվը ողջունեց հիւրերին, ընդգծելով միջպարլամենտական միութեան աշխատանքների նշանակութիւնը, որ ձգտում է հաշտեցնելու հնարաւոր թշնամութիւնը և ամրապնդելու ազգային բարեկամութիւնը:

Դէստուրնէլ-դը-Կօնստանը պատասխան-ճառում ի միջի այլոց մատնանիշ արեց այն փայլուն ընդունելութեան վրա, որին հանդիպեցին ֆրանսիացի պարլամենտականները ռուսական բոլոր խաւերում, որ հանդիսանում է ընդհանուր գործի բարեյաջող նշան:

Նիստը աւարտվելուց յետոյ, ֆրանսիացի հիւրերը, շրջապատված պատգամաւորներով, դիտեցին Դումայի շէնքը:

Մարիինսկի թատրօնում ի պատիւ ֆրանսիացի հիւրերի տեղի ունեցաւ ներկայացում յօգուտ Պարիզի հեղեղից վնասվածների: Ներկայ էին Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնան, Մեծ Իշխանուհիներ Մարիա Ալէքսանդրօվնան, Ելենա Վլադիմիրօվնան, Միլիցա Նիկօլայեվնան, Մեծ Իշխաններ Բօրիս և Անդրէյ Վլադիմիրօվիչները, բուխարական էմիրը, մինիստրների խորհրդի նախագահը, պալատի և արտաքին գործերի մինիստրները, Պետական Խորհրդի և Դումայի անդամներից:

Հիւրերն այցելեցին նաև Պետրոս-Պօղոսի տաճարը և Ալէքսանդր III կայսրի թանգարանը: (Հ. Գ.)

—

Պարիզ, 6 փետրվարի

Կառավարութեան, Դումայի և ազգաբնակութեան ֆրանսիացի պարլամենտականներին ցոյց տուած շքեղ ընդունելութիւնը ֆրանսիական հասարակական կարծիքի վրա թողնում է նպաստաւոր և ուժեղ տպաւորութիւն:

«Թանը» սպասում է, որ այցը կարևոր էջ կը դառնայ ֆրանս-ռուսական յարաբերութիւնների պատմութեան մէջ. ռուսական և ֆրանսիական ներկայացուցչական հաստատութիւնների անդամների այցելութիւնների փոխանակութիւնը նոր սանկցիա է տալիս միութեան, ապացուցելով որ դիպլօմատիայի իրագործած մերձեցումը համապատասխանում է երկու ազգերի ցանկութիւններին: Վերջում «Թանը», յիշելով Դումայի օգտաւէտ գործունէութիւնը, յղում է նրան ֆրանսիական ժողովրդի համակրանքը և յարգանքը: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 7 փետրվարի

Ֆրանսիացի հիւրերը նախաճաշի հրաւիրվեցին Կայսերական աէրօկլուբը: Դիմաւորեցին նախագահ կոմս Ստէնբօկ-Ֆէրմօրը և փոխ-նախագահ Շիպօվը: Ստէնբօկ-Ֆէրմօրն արտասանեց ողջոյնի ճառ: Խօսեցին Դէստուրնէլը, Մենիէն, Լէբուկը:

Երեկով հիւրերը ներկայ եղան «Խաղաղութիւն» ընկերութեան հանդիսաւոր նիստին, ընդունվեցին բուռն ծափահարութիւններով, գրաւեցին տեղեր նախագահական սեղանի և կայսրի պատկերի առաջ: Մաքսիմ Կօվալևսկիի ողջոյնից յետոյ ճառեր արտասանեցին Դէստուրնէլը, Կորվին-Միլևսկին, պատգամաւոր Կօլէն: Նիստից յետոյ հիւրերին առաջարկվեցին մրգեղէն և գինի: Բարեկամական զրոյց, «vive la France» բացագանչութիւններ: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 7 փետրվարի

Երեկոյեան ժ. 7½-ին «Մեդվեդ» հիւրանոցում տեղի ունեցաւ պարլամենտական բանկէտ: Ֆրանսիական հիւրերին ողջունեցին քայլերգով: Ճաշին առաջին բաժակն առաջարկեց Եֆրեմօվը Կայսրի առողջութեան համար. օրհներգ, ուռա՛: Երկրորդ բաժակը Եֆրեմօվը առաջարկեց Ֆալիէրի համար. մարսէլիէզ: Երրորդ բաժակը Եֆրեմօֆն առաջարկեց ֆրանսիական ազգի կենացը: Կորվին-Միլևսկին առաջարկեց ֆրանսիական պարլամենտի մտքի, պերճախօսութեան և առաքինութեան համար. Լէբուկը Պարիզի կողմից՝ ռուս ազգի կենացը, որին Ֆրանսիան ցանկանում է տեսնել գեղեցիկ և մեծ. Ակիմօվը՝ ֆրանսիական սենատի բարգաւաճման համար, Խոմեակօվը՝ ֆրանսիական պալատի առաջդիմութեան համար, Երմօլօվը՝ դաշնակից բարեկամ ժողովրդի ընտրեալների առողջութեան համար, սենատոր Մենիէն՝ Պետական Խորհրդի համար. Դէլաբառին շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան համար պալատի անունից. Մաքսիմ-Կօվալևսկին ռուսաց խմբակի կողմից բաժակ առաջարկեց ֆրանսիական միջպարլամենտական խմբակի համար, Դէստուրնէլը՝ կայսրուհիների և կայսրի կենացը, որ նախաձեռնող հանդիսացաւ Հաագայի կօնֆերենցիայի և Դումայի հաստատման: Դէստուրնէլի ճառին հետևեց ռուսական օրհներգը. յետոյ խօսեց Իզվօլսկին. ապա՝ մարսէլիէզից յետոյ ֆրանսիական դեսպանը բաժակ առաջարկեց Ռուսաստանի բարգաւաճման համար: Վերջին բաժակը Եֆրեմօֆն առաջարկեց ռուսերէն՝ թանգագին հիւրերի համար:

Իզվօլսկիի բաժակաճառը.

«Մի քանի ամիս առաջ իմ կօլլէգ և բարեկամ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը դիմելով Պետական Խորհրդի և Դումայի անդամներին ասաց. «Այն ընդունելութիւնը, որպիսին մենք ցոյց ենք տալիս ձեզ Ֆրանսիայում, դուք ցոյց կը տաք և մեզ Ռուսաստանում»: Այժմ հասաւ րոպէն, երբ մենք յիրաւի կարող ենք մեր հերթին ասել մեր ֆրանսիացի հիւրերին՝ «բարի եկաք»:

«Ես բաղդաւոր եմ, պարոններ, որ ինձ է ընկնում ձեզ ողջունելու պատիւը ռուսաց կառավարութեան անունից, և ես օգտվում եմ այս առիթից՝ վկայելու ջերմ գոհունակութեան զգացմունքով, որ ձեր այցելութիւնը Ռուսաստան նոր ապացոյց կը լինի այն սերտ կապերի, որ գոյութիւն ունեն մեր երկու երկրների միջև:

«Այն միշտ յիշատակելի դարագլխից, երբ այդ կապերը հաստատվեցին, անցել են շատ տարիներ, Ալէքսանդր III կայսրի և նախագահ Կարնօյի սկսած խաղաղ գործը փորձանքների ենթարկվեց. ռուս-ֆրանսիական դաշնակցութիւնը դարձաւ եւրոպական քաղաքական սիստեմի էական տարր և հզօրապէս նպաստում է ընդհանուր խաղաղութեան պահպանման: Արտայայտելով այս մտքերը, ես հաւատացած եմ, որ հաւատարիմ արտայայտիչն եմ հանդիսանում այն սերտ միութեան և համաձայնութեան զգացմանց, որոնք ոգևորում են ոչ միայն այս սեղանը շրջապատողներին, այլ և երկու հարևան դաշնակից ազգերին: Խնդրելով ձեզ, պարոններ, հաղորդել ձեր ընկերներին՝ ֆրանսիացի սենատորներին և պատգամաւորներին, թէ ինչպէս մենք բաղդաւոր եղանք ձեզ տեսնելով մեր մէջ, խմում եմ Ֆրանսիայի և Ռուսաստանի կենացը, երկու երկրների դաշնակցութեան համար»:

Բանկէտից յետոյ ֆրանսիացի հիւրերը այցելեցին ռուսական սոկոլների տօնին և ներկայ եղան վարժութիւններին: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սէրաէվօ, 7 փետրվարի

Այսօր յայտարարվեց սահմանադրութիւն ամբողջ երկրում: Քաղաքը զարդարված է դրօշակներով: Նահանգապետը կարդաց կայսերական հրովարտակը, որով սանկցիա է տրվում սահմանադրութեան օրէնքներին, և բացագանչեց «չօխ» ի պատիւ կայսրի: Երաժշտութիւնը նուագեց ազգային օրհներգը: Պարպվեց 21 թնդանօթ:

(Հ. Գ.)

—

Բեռլին, 6 փետրվարի

Ռէյխստագ: Սօցիալիստները հարցապնդում ուղղեցին պետական կանցլերին՝ ընտրութիւնների առիթով նրա արած յայտարարութեան մասին: Հարցապնդումը պատճառաբանում է ս.-դ. Ֆրանկօն, որ ի միջի այլոց խօսում է յօգուտ պրուսական ընտրողական բարենորոգման եղած ցոյցերի և վերջացնում է ճառը հետևեալ խօսքերով.

«Կռիւը շարունակվում է. պետական կանցլերը հրաժարական կը տայ» (բուռն ծափահարութիւն ձախից, աջից ձայներ՝ «պֆոյ»):

Պետական կանցլերը պատասխանում է հարցապնդմանը մի երկար ճառով, որով ի միջի այլոց ասում է, որ կասկածում է, թէ միայն կօգնէ ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնատւութիւնը, սակայն ոչ նա, ոչ դաշնակից պետութիւնները չեն մտածում երբեք ռէյխստագի գոյութիւն ունեցող ընտրողական սիստեմը. կամենում են հարցապնդման հեղի ները, աշխատելով պակասեցնելու ը բողների հասակի ցէնզը և ընդունել տալու կանանց ընտրողական իրաւունքները (ծափ. աջից)։

Երեկ. ժ. 7-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց րէյխստագի նախագահ Շտոլբէրգ-Վէրնիգէրոդէն։ Րէյխստագը հրաւիրեց պահպանողական կոմս Շվէրլինլէվիցին։ (Հ. Գ.)

—

Կահիրէ, 7 փետրվարի

Մինիստր-նախագահ Վուտրոս փաշան այսօր, մինիստրութեան տան մօտերը, ենթարկվեց մի ուսանողի յարձակման, որ կրակում էր ատրճանակից։ Մինիստրը ծանր վիրաւորվեց։ Ուսանողը ձերբակալվեց։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 6 փետրվարի

Պատգամաւորների պալատ։ Դրագումիսը յայտնեց, որ բոլոր կուսակցութիւնները համաձայն են ազգային ժողովի գումարմանը՝ սահմանադրութիւնը մասնակի կերպով վերաքննելու նպատակով նորմալ դրութիւնը վերականգնելու համար. երբ ժամանակը գայ, կուսակցութեան այն պարագլուխները, որոնք իրանց վրա են առնում այդ վերաքննութեան պատասխանատւութիւնը, հանդէս կը գան ազգային ժողով գումարելու առաջարկութեամբ. այն ժամանակ անհրաժեշտ կը լինի արագացնել նրա իրականացումը, որովհետև անցանկալի բարդութիւնների առաջն առնելու ուրիշ միջոցներ չը կան։

Հակառակ լրագրական լուրերին, տեղիս տեղեակ շրջաններում հաւատացնում են, որ եթէ նոյնիսկ պրինցները Աթէնք վերադառնան, յամենայն դէպս խօսք լինել չէ կարող այն մասին, թէ թագաւորը ընտանեկան խորհուրդ կը գումարէ։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 7 փետրվարի

Եկան բուլգարական թագուհին, բուլգարական մինիստր-նախագահ Մալինովը և արտաքին գործերի մինիստր Պապրիկովը։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 6 փետրվարի

Կայացաւ նոր կառավարական կուսակցութեան, որ այժմ կոչվում է աշխատանքի ազգային կուսակցութիւն, հիմնադիր ժողովը։ Մինիստր-նախագահ Կուէն Խեդէրվարին պարզեց կառավարական բարենորոգմանց ծրագիրը. կառավարութիւնը իր մերձաւոր պարտականութիւնն է համարում շուտով մշակել ընտրողական բարենորոգման նախագիծ, հիմնված ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքի վրա, պահելով պետութեան ազգային կերպարանքը և բարելաւելով ոչ-մաջառ եղբայրակիցների դրութիւնը։ Խեդէրվարին արժանացաւ օվացիաների։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 6 փետրվարի

«Պէստէր-Լլօյդում» տպված է Սօֆիայից մի աչքի ընկնող անձնաւորութեան տեղեկութիւնը, որի համաձայն Դանէվի հաղորդագրութիւնները նրա՝ Թիւրքիա մեկնելու մասին համոզեցին բուլգարական թագաւորին և կառավարութեանը՝ թէ անհրաժեշտ է բարի յարաբերութիւններ ունենալ վերանորոգված Թիւրքիայի հետ։ Սօֆիայում մտադիր են երկարատև համաձայնութիւն կապել Բ. Դրան հետ։ Բուլգարիայի օրինակին հետևում է Սերբիան. և որովհետև Յունաստանում ղեկավար շրջանները ջանում են երկրում շարժումը ուղղել ներքին քաղաքական նպատակների, ստացվում է բոլոր բալկանեան երկրների և ժողովուրդների իսկական մրցում Թիւրքիայի բարեկամութիւնն առնելու ձգտման մէջ։ Այս ցոյց է տալիս երիտասարդ-թիւրքերի աջողութիւնը, որ նրանք ձեռք բերին շնորհիւ Թիւրքիայի կայունութեան, որ դիւրացնում է նրանց յետագայ աջողութիւնը։ Այդ յեղաշրջումը Բալկանեան թերակղզում ապահովում է օսմանեան պետութեանը ցնցումներից և աւելացնում է Թիւրքիայի գործողութիւնների ազատութիւնը նրա բոլոր արտաքին քաղաքականութեան մէջ։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 6 փետրվարի

Լիբէրալ կուսակցութեան բանակցութիւնները իռլանդացիների և բանուորական կուսակցութեան հետ ժամանակաւորապէս դադարեցին։ (Հ. Գ.)

—

Մօնտէկարլօ, 7 փետրվարի

Մասսէնի «Դօն-Քիշոտ» օպերայի առաջին ներկայացմանը մեծ աջողութեամբ հանդէս եկաւ համանուն դերում Շալեապինը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 6 փետրվարի

Օլգա Շտէյնի փախուստը գլուխ բերելու գործի առիթով երդուեալները երկու ժամ խորհրդակցելուց յետոյ արդարացրին Բազունովին, Արօնսոնին և Շուլցին։ (Հ. Գ.)

—

Բլիւֆիլդս (Նիկարագուա), 7 փետրվարի

Գեներալ Մէնի հաղորդագրութեան համաձայն, երէկ ամբողջ տասը ժամ շարունակվեց կռիւը Սէն-Վինցէնսի մօտերը։ Կառավարական զօրքերը յետ նահանջեցին մեծ կորուստներով թշնամու արտիլէրիայից։ Մանագուէի հիւպատոսարանի պաշտօնակատարը խնդրեց գեներալ Էստրադային միջնորդի դեր յանձն առնելու համար։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 6 փետրվարի

Միացեալ թեմական համագումարին արքեպիսկոպոս Պավօնի նախագահութեամբ մի բանաձև ընդունվեց, որով անսասան հաստատութիւն է արտայայտվում եկեղեցուն և պարսաւվում են այն բռնութիւնները, որ կատարում է ֆրանսիական կառավարութիւնը ազատ խղճի վրա։ (Հ. Գ.)

—

Շամախի, 6 փետրվարի

Գիշերս երկու չարագործների ձեռքով վիրաւորվեցին պրիստաւի օգնական Պարամանովը՝ ծանր, կարագօզլին՝ թեթև։ Յանցագործները ձերբակալվեցին։ (Հ. Գ.)

—

Բեռլին.—«Berliner Loc. Anz.»-ի Վիէննայի թղթակիցը սենսացիօն տեղեկութիւն է հաղորդում, որ աւստրո-ռուսական բանակցութիւնները յանգեցին անպասելի կերպով մեռած կէտի. կասկածվում է, որ համաձայնութիւնը շուտով գլուխ չը գայ։ («Б.»)

—

Աթէնք.—Խիստ ցէնզուրա է մտցված. լրագիրները լոյս են տեսնում զինուորական լիգայի անդամների հսկողութեամբ. արտասահման ուղարկվող հեռագիրները գրաւվում են. ի նշան բողոքի զինուորական լիգայի տէրրորի, շատ լրագիրներ դադարեցին լոյս տեսնել։ Յունաց նաւատորմը ապստամբութիւն բարձրացրեց և հեռացաւ Պիրէյից։ Կապիտան Տիպալդոսը վերստին մտաւ ապստամբների շարքը։ («Б.»)

—

Պարիզ.—Պարլամենտական առաջիկայ ընտրութիւններին Պարիզում իրանց թեկնածութիւնն են դնում 3 կին։ Թէպէտ և աջողութեան շատ սակաւ շանսեր կան, սակայն այդ բանը նրանց չէ վհատեցնում, որովհետև այդ թեկնածութեան նպատակն է ֆեմինիզմի գաղափարը պրօպագանդել։ («Р.У.»)

—

Պետերբուրգ.—Ֆինանսների մինիստրութեան մէջ սկսվեց նիւթերի մշակումը նոր հարկեր մտցնելու վերաբերութեամբ։

Պրօֆէսօր Գրիբօէդովը, աստղաբաշխական փաստերի հիման վրա, հնարաւոր է գտնում, որ կենտրոնական Ռուսաստանում այս տարի անբերրիութիւն լինի։

Մինիստրների խորհուրդը ժամանակաւորապէս, մինչև բուխարական հրէաների մասին մի ընդհանուր կանօնադրութիւն մշակելը, թոյլ տուեց վերջիններին ապրել Սամարղանդի, Ֆերգանի և Անդրկասպեան շրջաններում։ («Б.»)

—

Բագու, 7 փետրվարի

Ոստիկանութիւնը ձերբակալեց երկու կասկածելի մարդու, որոնք մեղադրվում են ցերեկը տէր Պետլիէն կողոպտելու, քաղաքապահ ոստիկանին սպանելու և «Եւրոպա» հիւրանոցի վրա յարձակվելու մէջ։

Ղուբայի գաւառի Լէյթամ գիւղում մահմեդականների միջև տեղի ունեցաւ հրացանաձգութիւն։ Սպանվեցին 2, վիրաւորվեցին 6 մարդ։ Դրդիչը ձերբակալված է։

Շամախու գաւառի Միրաֆ-Մարազի գիւղում գտնվեց հնաւուրց մի շիրիմ եօթ դագաղներով։ (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պօլսից գրում են մեզ, որ Դուրեան պատրիարքը, համաձայն ազգային ժողովի որոշման, յետ վերցրեց իր հրաժարականը և նորից ստանձնեց իր պատրիարքական պաշտօնը։ Այդ մասին թղթակցութիւնները կը տպենք յաջորդ անգամ։

—

Բեռլին, 1 փետրվարի

Այստեղ տեղեկութիւններ են ստացվել այն մասին, որ մայիսի վերջում սպասում են սուլթանի Պետերբուրգ գալուն։ («У. Р.»)

—

Կ. Պօլիս, 1 փետրվարի

Թիւրքաց նախկին սուլթան Աբդիւլ-Համիդը մահամերձ է. սկսել է հոգեվարքը։ («Р.У.»)

—

Կ. Պօլիս.—Արժանահաւատ աղբիւրներից հաղորդում են, որ Յունաստանը խոստացաւ պետութիւններին չընդունել ազգային ժողովում կրետական պատգամաւորներին, յայտարարելով իր լաւագոյն զգացմունքներից մասին դէպի Թիւրքիան։ («Р.У.»)

—

Պարիզ.—Տեղիս Թիւրքաց դեսպանը մեկնում է Կ. Պօլիս։ Նրա մեկնելը խօսակցութիւնների առարկայ է դարձել։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թաւրիզ, 7 փետրվարի

Րահիմ խանի փախուստից յետոյ, Եփրեմը և Բահաթուրը ձեռնարկեցին զինաթափ անելու Ղարադաղը։ Եփրեմը և Բահաթուրը որոշ ժամանակով յետաձգեցին Թաւրիզ գալը։ Չը նայած որ այլևս ամենափոքր անգամ երկիւղ չը կայ Րահիմ խանից, Սաթթար խանի և Բաղըր խանի ֆէդայիները զէնքերը վայր չեն դնում։ Բազմաթիւ զինված գործադուլներ Թաւրիզում ստեղծեցին յուզալից տրամադրութիւն բազարներում։ (Հ. Գ.)

—

Թէհրան,—Մէջլիսի յատուկ նիստը նուիրվեց ժողովրդական ազատագրութեան հերոսներ Սաթթար խանին և Բաղըր խանին։ Պատգամաւորները գովաբանեցին երկուսին էլ։ Միաձայն վճռվեց Սաթթար խանին շնորհել սարդարի աստիճան և նշանակել ցմահ թոշակ 6000 ր. տարին։ Բաղըր խանը ստանալու է ցմահ թոշակ 4900 ռուբլի։ («Б.»)

—

Թէհրան.—Բէնդէր-Աբաս եկաւ անգլիական զինուորական մի նաւ. այդ քաղաքի շրջակաները հեղեղված են աւազակներով, որոնք պաշարման դրութեան մէջ են պահում կարաւանային ճանապարհները։ Թէհրանում բռնվեց մի աւազակախումբ, որին ղեկավարում էր դոկտոր Րասյիմ-խանը և տարածում էր յետադիմական պրօկլամացիաներ։ Գտնվեցին հեկտօգրաֆ, մեծ քանակութեամբ կոչեր և գրագրութիւն, որը սաստիկ կասկածելի է կացուցանում նախկին շահին։ Ֆէդայիների մի խումբ խնդիրք մատուցեց սենատը բանալու մասին։ Պարլամենտը խոստացաւ քննել հարցը ընթացիկ գործերը աւարտելուց յետոյ։ Կառավարութեանը հաղորդում են, որ ռուս զինուորների մի զօրաբաժին եկել է Ենի-իմամը, 70 վերստ հեռաւորութեամբ մայրաքաղաքից, մի օֆիցէրի հրամանատարութեամբ, որը հրամայեց մաքրել կայարանի պօստային հիւրանոցը, որը պատկանում է սպանված սադրազամի ժառանգներին։ Լուրերի համեմատ, արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեաները ռոճիկ չը ստանալով պատրաստվում են գործադուլ անել։ («Р. В.»)

—

Թէհրան.—Դիպլօմատիկական և պարլամենտական շրջաններում յամառ լուրեր են պտտում, որ Ռուսաստանի և Պարսկաստանի յարաբերութիւնները սուր կերպարանք են ստանում։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵԿՈՅԹ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Կիրակի, փետրվարի 7-ին, ցերեկով, տեղի ունեցաւ Կ. Հ. Բ. Ընկ. գրադարան-ընթերցարանի հանդիսաւոր բացումը։

Այդ առիթով Ընկ. դահլիճում տրվեց մի երեկոյթ կօնցերտային բաժնով։

Հրաւիրված էին բազմաթիւ հիւրեր երկու սեռին պատկանող։

Հիւրերի համար պատրաստված էր թէյ բուտերբրօտով և մրգերով։

Ժամը 9 և կէսին սկսվեց կօնցերտը, որը փոքրիկ ընդմիջով տևեց մինչև ժամը 11 և կէսը։

Կարդացին ոտանաւորներ տիկ. Մայսուրեան և Շախաթունի։ Երգեցին իտալական երգիչ Բրօջի, տիկ. Խօսրովեան, Տէր-Աստուածատրեան։ Կատարողները արժանացան բուռն ծափահարութիւնների։

Հրաւիրված էին թէ ասիական և թէ իտալական նուագախմբեր։ Տեղի ունեցան պարեր, թէ տեղական և թէ եւրոպական։

Երեկոյթը բացի զուարճալի ժամանց լինելուց նաև տուեց ընկերութեան դրամարկղին որոշ հասոյթ, որի քանակը դեռ յայտնի չէ ճշգրէն։

ԺՈՒՐՆԱԼԻՍՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, փետրվարի 7-ին, քաղաքային դումայի նիստերի դահլիճում կայացաւ Թիֆլիսի ժուռնալիստների մասնաւոր ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

Օրակարգի առաջին հարցը Միրզօյեվ-Բատալ միջադէպի քննութիւնն էր, որ այս րօպէիս զբաղեցնում է ամբողջ հասարակութեան միտքը և որի առիթով դումայի դահլիճի վերնասրահը լի էր հետաքրքրվողների մեծ բազմութեամբ։

Ուղիղ ցերեկվայ ժամը 12-ին ընկերութեան վարչութեան նախագահ երդ.-հ. Գրուզինբէրգը բանում է ժողովը և առաջարկում է նախ յարգել նորոգ հանգուցեալ Դիմուրեայի յիշատակը յոտնկայս։

Ընդհանուր ժողովը, կատարելով առաջարկութիւնը, իրան նախագահ է ընտրում երդ.-հաւ. Պ. Մ. Դօլուխանեանին։

Ընկ. վարչ. քարտուղարը մի ժամ շարունակ կարդում է ընդարձակ զեկուցագիր էլեքտրաքարշի ընկերութեան և Միրզօյեվի միջև կապված պայմանագրի մասին, կանգ առնելով բոլոր մանրամասնութիւնների վրա, որոնք արդէն դարձել են հասարակութեան սեփականութիւն։

Ընդհ. ժող. նախագահը նախ քան խօսք տալը ցանկացողներին՝ յայտնում է, որ Միրզօյեվի գործակիցներից ժուռնալիստ Վլադ. Նագուրսկին մի յայտարարութիւն է ներկայացրել, որով խնդրում է ընդհ. ժողովին հարկադրել «Тифлисскій Листокъ» և «Новая Рѣчь» լրագիրների խմբագիրներին տպել առանց բառ անգամ կրճատելու նրան Նագուրսկի յօդուածները վերոյիշեալ պայմանագրի մասին, որպէսզի հասարակութիւնը մանրակրկիտ կերպով իրազեկ լինի գործի հանգամանքների հետ, ճանաչէ իսկական յանցաւորներին։

Սկսվում է ապա մտքերի պարզաբանութիւն ընդհանուր առմամբ երկու ժուռնալիստների (Վլ. Նագուրսկի և Լ. Կիպիանի) վարմունքի շուրջը։ Խօսւածքներից նկատվում են երկու հոսանք. մինը գտնում էր, որ ընդհանուր ժողովը մինչև օրս եղած բաւականին ակներև փաստերի հիման վրա պէտք է այժմ ևեթ իր խիստ դատավճիռը կարդայ այդ երկու վաճառված ժուռնալիստների վերաբերութեամբ, հուսկ յետոյ միայն կարելի է քննութեան առնել կաշառված լինելու և այդ սատոր ձեռնարկութեանը մասնակցելու նրանց դրդապատճառների հարցը. երկրորդ հոսանքը, ընդհակառակն, կողմնակից էր, որպէսզի թեթև սրտով դատավճիռ չորոշվի, այլ ամբողջ գործը վերաքննվի բազմակողմանի կերպով, նկատի առած նաև նորանոր հանգամանքները, մանրամասնութիւնները, յայտարարութիւններն այդ գործի նկատմամբ. քննութիւնը պէտք է կատարվի ժուռնալիստների ընկերութեան վարչութեան ձեռքով և ընդհանուր ժողովից ընտրված մասնաժողովի աջակցութեամբ և քննութիւնից յետոյ հետևանքի մասին միացեալ խորհրդակցութիւնը իր եզրակացութեան հետ հաղորդէ հետևեալ անգամ ընդհանուր ժողովին։

Հէնց այն էր՝ բարձրացել էր տեղից խօսելու այս երկրորդ հոսանքի արտայայտիչների դէմ ժուռնալիստ Գելեչվիլին, երբ մեղադրվող Նագուրսկին, որ իր յայտարարութիւնը բերել էր ինքը անձամբ և կանգնել էր մինչ այդ դրան ետևը, չը կարողանալով տանել այլ ևս իր վրա բարդվող կատաղի մեղադրանքները և յարձակումները, վազում է դէպի դահլիճ և, բարձրանալով ամբիօն, յուզված ու աւելորդ բարձրաձայն խնդրում է հնարաւորութիւն տալ իրան՝ բացէ ի բաց, երես առ երես

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻՑ ԻՒՐԻԷՎ *)

(Ճանապարհորդական տպաւորութիւններ)

—

Իմ ճանապարհորդակից ուսանողը դիմելով օրիորդին նկատեց, որ ի զուր է օրիորդն յայտնում այն կարծիքը, որ այդ հարցի առիթով իւրաքանչիւր աննպաստ կարծիք յայտնող՝ հակառակորդ է ներկայանում կանանց շարժման։

— Ես բացարձակապէս յայտնում եմ,—աւելացրեց նա,—որ կողմնակից լինելով կանանց շարժմանը՝ ի սրտէ ցանկանում եմ տեսնել իրականութեան մէջ այդ առիթով գոյութիւն ունեցող կարծիքների և հայեացքների հակառակը. սակայն խորին վշտով պէտք է նկատեմ, որ մեզ շրջապատող անողոք իրականութիւնն ակամայ համոզում և հարկադրում է ինձ և ինձ հետ՝ շատերին, որ տիրապետող հայեացքները և կարծիքները չեն մեղանչում իրողութեան և արդարութեան դէմ։ Կարևոր և անհրաժեշտ եմ համարում յայտնել և այն, որ անգամ առաջադէմ կանանց շարքերում շատ քչերին կարելի է հանդիպել, որոնք ներշնչված լինէին կնոջ իսկական և որոշ պարտականութիւնների գիտակցութեամբ։ Կանանց մեծագոյն մասը ձգտում է համալսարանները մեքենայաբար, մի որոշ իներցիայի ուժով և բացառապէս ազատվելու իրանց ծնողների, խնամատարների խնամակալութիւնից։ Նրանցից շատերը կնոջ ազատագրական գաղափարն աշխատում են որոնել բարքերի աղաւաղման և ազատութեան մէջ։ Եւ բնականաբար իրերի այդօրինակ աննորմալ և հակասական դրութիւնը կնոջ համար կունենայ միայն տխուր և անմխիթար հետևանք։ Կինը շնորհիւ տիրապետող այդօրինակ այլանդակ հասկացողութիւնների, զրկվելով իր համեստութիւնից և պարկեշտութիւնից, որոնք կազմում են նրա բնական հոգեկան հարստութիւնը և զարդը, ստիպված կը լինի խախտել և իր ընտանեկան երջանկութեան որոշ հիմունքները, և վերջ ի վերջոյ կնոջ այդօրինակ այլասերումը առաջ կը բերի մի ընդհանուր հանրամարդկային աղէտ, մի ընդհանուր հասարակական դժբաղդութիւն, որի հետ մարդկութիւնը ստիպված կը լինի իր ժամանակին մարտնչել այնպէս, ինչպէս օրինակ նա մարտնչում է մի տարափոխիկ զօրեղ հիւանդութեան դէմ։

Ամփոփելով իր խօսքը՝ իմ ուսանող ընկերը եկաւ այն եզրակացութեան, որ ժամանակակից կնոջը պակասում է այն կենսական պատրաստականութիւնը և դրանից բղխող այն խորը գիտակցութիւնը, որոնք միայն կարող կը լինէին ապահովել կնոջ սօցիալական անկախութեան գործի աջողութիւնը և նրա ցանկալի բարի ելքը։

Առաջ բերելով մեր գլխաւոր վիճաբանութիւնները, ես աւելորդ համարեցի առաջ բերել և այն արտայայտված կարծիքները, որոնք ըստ իրանց նշանակութեան և կարևորութեան՝ առանձնապէս նշանակութիւն չեն ներկայացնում շօշափված խնդրի նկատմամբ։ Բաթումից գրեթէ մինչև Հանքային Ջրերի կայարանը՝ մենք անց կացրինք այդ վիճաբանութեան մէջ, սակայն որքան մեր գնացքը մօտենում էր յիշեալ կայարանին, մեզ աւելի և աւելի սկսում էր զբաղեցնել այն միտքը, թէ ինչ միջոցով և ինչպէս կարողանանք տեղ գրաւել այն գնացքի մէջ, ուր պէտք է տեղափոխվէինք մենք յիշեալ կայարանում, որովհետև, իմ ճանապարհորդակիցների պատմելով, ճանապարհորդների վիճակն այդ կայարանում չափից դուրս աննախանձելի և անյարմար պայմանների մէջ է դրված։

Եւ իրօք, ինչպէս յետոյ ես տեսայ և համոզվեցի, ճանապարհորդի դրութիւնն այդ կայարանում դժոխային է և սոսկալի։

Բաբելոնական խառնակման սոսկալի պատկերը նսեմանում է կատարելապէս՝ յիշեալ կայարանի պատկերի դէմ։

Շաբաթներով, օրերով ճանապարհորդները սպասում են իրար վրա թափված, այս կամ այն գնացքի մէջ տեղ ունենալու նպատակով, սակայն, կարգապահութեան բացակայութեան պատճառով, ով ուժեղ է և կոպիտ՝ նա հասնում է իր նպատակին, իսկ ով քաղաքավարի և կօրրեկտ իր վարմունքի մէջ՝ նա մնում է օրերով սպասելով։ Զարմանալի և անբացատրելի է այս դէպքում այն դատապարտելի անտարբերութիւնը և անհոգութիւնը, որ ցոյց է տալիս ճանապարհային վարչութիւնը։

Տոմսակները վաճառում են առանց հոգ տանելու վաճառված տոմսակների սեփականատէրերի յարմարութեան մասին, առանց մտածելու իւրաքանչիւր ճանապարհորդին իր տեղը յատկացնելու։ Շնորհիւ այդ քաօսային դրութեան, մենք չը կարողացանք յաջորդ գնացքով շարունակել մեր ճանապարհորդութիւնը, ուստի ստիպված էինք սպասել հետևեալ գնացքին, ուր վիճակված էր մեզ առանց պլացկարտի, հետևաբար և առանց քնելու յարմարութեան, շարունակել մեր մնացած ճանապարհը։

Մոսկվայի կայարանում ես և իմ ընկերս ստիպված էինք բաժանվել միմեանցից, որովհետև, ինչպէս վերևում յիշեցի, նա ուսանում էր Մոսկվայի համալսարանում։

Պէտք է խոստովանեմ, որ չափազանց ծանր և սրտաշարժ էր մեր միմեանցից բաժանվելը, որովհետև մի քանի օրվայ ընթացքում մենք այնքան մտերմացել, այնքան ընտելացել էինք միմեանց, որ հազիւ թէ ուրիշ դէպքում տարիներով միմեանց հետ ապրողները կարողանային զգալ այն, ինչ զգում էինք մենք այդ րօպէիս։

Որչափ անախորժ և ցաւալի էր մեզ մեր անջատումը, սակայն հպատակվել հանգամանքների դաժանութեանը՝ մենք ակամայ պարտաւորված էինք, ուստի եղբայրական անկեղծ, ջերմ համբոյրներ դրօշմելով միմեանց շրթունքների՝ բաժանվեցինք միմեանցից, խոստանալով նամակագրութեամբ պահպանել մեր յարաբերութիւնը։

Բազմամարդ Մոսկվայի փողոցները, որպէս կատաղի ծովի ալիքներ, մի ակնթարթում կլլեցին, անյայտացրին նրան իմ աչքից, և այդպէս գնաց հեռացաւ նա՝ տանելով իր հետ իմ ընկերական ջերմ յարգանքը և համակրանքը։

Այստեղ ես չեմ կարող չը յայտնել իմ խորին ցաւակցութիւնը այն հանգամանքի առիթով, որ ինձնից միանգամայն անկախ պատճառներով ես զրկված եմ հնարաւորութիւնից տալ տպաւորութիւններիս նկարագրութիւնը և այն քաղաքների մասին, որոնց ես հանդիպեցի իմ ճանապարհորդութեան ընթացքում, օրինակ Մոսկվայի, Պետերբուրգի և միացած մի քանի աննշան քաղաքների մասին, որովհետև Իւրիէվի համալսարանի պարտադիր կանոնների համաձայն ես պարտաւոր էի որոշված օրը այնտեղ լինել, սակայն Թիֆլիսից ընտանեկան մի քանի հանգամանքների պատճառով ուշ մեկնելով՝ որոշված ժամանակից նոյնիսկ մի-երկու օր ուշ էլ հազիւ կարող էի տեղ հասնել. և այսպէս՝ ստիպված էի ժամանակ շահելու նպատակով մի գնացքից միւսը չուել, առանց կանգ առնելու կամ հանգստանալու մի որևէ քաղաքում։

Մոսկվայի կայարանում նորից վիճակվեց մեզ ճաշակել մի գնացքից միւսը տեղափոխվելու ամբողջ հրաշալիքը, սակայն պէտք է խոստովանել, որ այն դժուարութիւնները և արգելքները, որոնց հանդիպեցինք մենք Հանքային Ջրերի կայարանում, այստեղ տեղի չունէին։

Շնորհիւ Մոսկվայի կայարանի եթէ ոչ գաղափարական, գէթ տարրական կարգապահութեան, մենք առանց դժուարութիւնների տեղ գրաւելով դէպի Պետերբուրգ մեկնող գնացքի մէջ՝ մի ժամից յետոյ սլանում էինք նոր գնացքով, թողնելով պատմական Մոսկվային հեռաւոր հորիզոնում, օդային ընդարձակ տարածութեան մէջ բարձրացող իր բազմաթիւ գործարանների ծխնելոյզներով և անթիւ եկեղեցիների փայլուն գմբէթներով։

Բաւականաչափ հեռաւորութեան վրա Մոսկվայից՝ սկսվում են, ընդարձակ տարածութեան վրա երկաթուղագծի ուղղահայեցութեամբ, Մոսկվայի ամարանոցները իրանց անշուք, սակայն գեղեցիկ փայտեայ բնակարաններով, ամբողջովին ընկղմված ծառախիտ անտառների և հարուստ բուսա

---

*) Տես «Մշակ» № 27.

բոլորի առաջ պատմել եղելութիւնը իր բնական ատտառով և ցոյց տալ աշխարհին՝ թէ անհիմն են նրա և նրա ընկեր Կիպիանիի դէմ բարդվող մեղադրանքները:

Դահլիճում Նազուրսկիի այդօրինակ անսպասելի երևալը բարձրացնում է աղմուկ և շփոթ, որ սակայն, բոլորապէս տեղի է տալիս լռութեան՝ լսելու ամբաստանվողի բացատրութիւնները «Բառայլ-Միրզոյեվ և ընկ.» սկանդալի մասին: Ե.

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքան հաստատեց իր խորհրդի որոշումն այն մասին, որ Թիֆլիսի դատաստանական պալատին յանձնվեն Գորու նախկին պրիստաւ Տրոֆիմ Գոլովօվը և Գորու գաւառապետ Դաւիդ Բակրաձէն քր. պատժ. 362-րդ յօդուածի մեղադրանքով:

◆ Զիջելով բանտային կոմիտէտի կանանց հոգաբարձութեան միջնորդութեան, Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականի ամուսին տիկին Վատացին համաձայնութիւն յայտնեց լինել նախագահ յիշեալ կոմիտէտում և գլուխ կանգնել աքսորականների երեխաներին խնամող հոգաբարձութեան:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յանձնարարեց իւրիսկօնսուլտ Քանանեանին պահանջ ներկայացնել դատարանով էլեքտրաքարշի ընկերութեանը նրա համար, որ սա հրաժարվում է ճանաչել նստափոխ տոմսակների ոյժը վագոնների ամբողջ երթեւեկութեան ժամանակ:

◆ Նկատի առնելով որ Թիֆլիսի դումայի իրաւասու Ա. Հախնազարեանն իբրև մասնաւոր հաւատարմատար դատական գործեր է վարում մասնաւոր անձանց պահանջներով քաղաքային ինքնավարութեան դէմ, քաղաքային վարչութիւնը դումայական իրաւաբանական մասնաժողովի քննութեանն է յանձնել այն հարցը, թէ վայե՞լ է արդեօք դումայի ձայնաւորին այդ տեսակ գործունէութիւնը թէկուզ էթիկայի տեսակէտից:

◆ Սերգէյ Զ. Միրզոյեվը հրաժարվեց քաղաքային դումայի իրան տուած իրաւունքից, որի համաձայն նա բացատրութիւն էր տալու անձամբ դումայի նիստում, էլեքտրաքարշի ընկերութեան հետ կապած պայմանագրի մասին, գտնելով այդ աւելորդ: Նա կարճ ժամանակով մեկնում է Մօսկվա:

◆ Դատական քննիչն յունվ. 5-ին ընդմիշտ դադարեցրեց Վերայի զառիվայրի վրա էլեքտրաքարշի № 47 վագոնի խորտակման գործը՝ յանցաւորներ չը լինելու պատճառով:

◆ Ջգրաշէնի եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ ինքը իր վերջին նիստում, լսելով եղբ. Ա. և Մ. Անանեանների որոշումը՝ տալ նոյն դպրոցին իւրաքանչիւր տարի նպաստ 300 ր. ի յիշատակ իրանց հօր հանգուցեալ Ա. Ս. Անանեանի, որոշել է. ա) յայտնել շնորհակալութիւն եղբ. Անանեաններին, որոնք տեսնելով դպրոցի նիւթական նեղ դրութեան մէջ՝ իրանց նպաստով ազատել են նրան փակման վտանգից և բ) ամեն տարի հանգուցեալ Ա. Ս. Անանեանի մահվան տարելիցին կատարել Ջգրաշէնի եկեղեցում հոգեհանգիստ՝ ներկայութեամբ հոգաբարձութեան անդամների, ուսուցչ. խմբի և աշակերտ-աշակերտուհիների:

◆ Բագւում հաստատվել է «Հրէական գրական ընկերութեան» ճիւղը, որ իրան նպատակ է դրել աջակցել հրէական գիտական գրականութեան ուսումնասիրութեանը և զարգացմանը հին-հրէական խօսակցական-հրէական և ուրիշ լեզուներով:

◆ Ներկայումս Բագւումն է գտնվում ֆինանսների մինիստրութեան անդամ Դիւբէն, որ քննելու է մի քանի հաստատութիւնների գործերը: Դիւբէն իր գործը Բագւում աւարտելուց յետոյ գալու է Թիֆլիս:

◆ Բագուեցի վաճառական Ս. Գ. Պօղոսեանը Թիֆլիս քաղաքին նուիրեց իր ամբողջ կարողութիւնը, բացի իր կնոջը կտակած 10,000 րուբլուց և ազգականներին՝ 2000 րուբլուց, իր անունով թոշակաւորներ հաստատելու համար բարձր կրթական հաստատութիւններում: Նահանգական դատարանը կտակը հաստատեց: Այժմ հանգուցեալի կտակակատարներ Մ. Սարգսեանը և Յ. Խունունցը հաշիւ ներկայացրին քաղ. վարչութեան: Թաղման ծախքերը հոգալուց յետոյ՝ կանխիկ դրամ մնում է 7975 ր., այսինքն մի գումար, որ չի բաւականանայ միայն հանգուցեալի այրուն և ազգականներին գոհացումն տալու: Մինչդեռ Ս. Պօղոսեանն իր կարողութիւնը հաշւում էր 100,000 րուբլի:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փետրվարի 4-ին, երեկոյեան դէմ, երեք հայեր Աւճալեան փողոցում հանդիպում են ուսուցիչ Սօլօվեանի 15-ամեայ Հմայեակ ռէալիստ որդուն, որին կառք նստեցնելով տանում են երկաթուղու կայարանը: Այստեղ անյայտ չարամիտները կաշառելով ապրանքատար գնացքի կօնդուկտօրներից մէկին՝ նստեցնում են Հմայեակ Սօլօվեանին գնացքը և տանում են Կարսի գծով: Հասնելով Նաւթլուղ կայարանը, նրանք իջնում են իրանց «գերու» հետ և տանում են ինչ-որ գիւղ՝ քաղաքից ոչ հեռու: Գիւղում երեխայից չարամիտները պահանջում են նամակ գրել հօրը և ստանալ 500 րուբլի փրկանք իրան ազատելու համար: Տղան պատասխանում է, որ իրանք հաշիւ են օրական ապրուստը ճարում, որտեղից կարող են տալ 500 րուբլի: Երկու օր երեխային պահելուց յետոյ և տեսնելով որ ապարդիւն է նրան այլևս պահել, չարագործները բերում են տղային և բաց թողնում Նաւթլուղ կայարանում: Գիւղի բնակիչները, որոնք երկու օր ականատես են լինում երեխայի «գերեվարութեան», անից ոչ մի բան չեն յայտնում իշխանութեան:

◆ Փետրվ. 7-ին, երեկ. ժ. 8-ին, Թիֆլիսաբնակ դերձակներ Գեր. Գրիգորեան Արզեան և Յովհ. Յակ. Աղաջանեան յայտնեցին ոստիկանութեան, որ նրանք երևան հանեցին 300 րուբլուց աւելի գումարի մահուդի ու աստառի գողութիւն իրանց արհեստանոցից՝ Լօրիս-Մելիկօվսկայա փող. № 8 տանը: Չարագործները կեղծ բանալի օգնութեամբ բանալով հարևան Խիտսելօվի ջրանցքի արհեստանոցը ու ծակելով պատը՝ մտնում են յիշեալ դերձակներ Արզեանի և Աղաջանեանի արհեստանոցը: Կասկածով ոստիկանութիւնը ձերբակալել է Սղնախի գաւառի Կանդաուրի գիւղի բնակիչ Միխայիլ Անտ. Սամբրեկաշվիլիին, որ ծառայում է Խիտսելօվի արհեստանոցում:

◆ Ոստիկանութեան պաշտօնեաները և զինւոր-պահակները շուրջկալների ժամանակ ձերբակալեցին 5-րդ քաղաքամասում 14 անգործ և անանցաթուղթ մարդկանց, 3-րդ քաղաքամասում 3, 12-րդ քաղաքամասում 13 հոգու:

◆ Փետրվ. 7-ին ախալցխացի Յովհաննէս Քացախեանը, որ տառապում է հոգեկան հիւանդութեամբ, Միքայէլեան կամուրջից իրան նետեց Կուր գետը, բայց լողացողները ազատեցին նրան և ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոց:

◆ Փետրվ. 7-ին սղնախեցի Նիկօլայ Մամաջանեանը, ըստ արհեստի գինեվաճառ, վէճի ժամանակ դանակով վիրաւորեց Թիֆլիսեցի Մատթէոս Գասպարեանին, որին ուղարկեցին հիւանդանոց: Յանցաւորը ձերբակալված է:

◆ Փետրվ. 6-ին, երեկ. ժ. 7-ին, Անդրէեվսկայա փողոցում, № 6 տանը իր բնակարանում անյայտ մարդկանց ձեռքով մահացու վէրքեր ստացաւ բաղաժի նախկին կօնդուկտօր Քութայիսի գ. բնակիչ Ալէքսէյ Ալ. Զուգուէլին, 42 տարեկան: Հիւանդանոց տարվելիս Զուգուէլին հոգին աւանդեց:

◆ Փետրվ. 6-ին շուրջկալի ժամանակ 10-րդ քաղաքամասում 7, 11-րդ քաղաքամասում 17 անգործ մարդիկ ձերբակալվեցին:

◆ Փետրվ. 6-ին Թիֆլիսեցի Բախշօ Աղաջանեանը Թիֆլիսեցի Տ. Ս. Պօղոսեանի բնակարանից յափշտակեց 270 րուբլու արծաթեղէն և ոսկեղէն

◆ Այսօր տեղի կունենան 79-րդ հետեւակ գնդի հրացանաձգութեան վարժութիւնները:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Кіевскія Вѣсти» լրագրում բերված են ցիտատներ պրօֆեսօրներ Ռօմանօվիչ-Սլավատինսկիի և Եղիազարեանի «Պետական իրաւունքի դասընթացքներից», որոնք ստորագրել են բողոք գերմանական պրօֆեսօրների կոչի դէմ: Իրանց դասագրքերում այդ պրօֆեսօրները կատարելապէս հակառակ հայեացքներ են դաւանում: Ռօմանօվիչ-Սլավատինսկին ասում է, որ Ֆինլանդիան իրապէս միացած է ռուսական պետութեան հետ, և որ Ալէքսանդր I-ը նուաճած շվեդական նահանգը առանձին պետութեան աստիճանի հասցրեց: Նոյն բանը կրկնում է և Եղիազարեանը: («У. Р.»)

◆ Պետերբուրգի դատաստանական պալատում փետրվարի 2-ին քննվում էր յայտնի ֆէլիէտօնիստ Ալ. Եաբլօնօվսկիի գործը, որին մեղադրում էր պատգամաւոր Տիմօշկինը չարախօսութեան մէջ: Այդ ֆէլիէտօնը Եաբլօնօվսկին տպել էր «Рѣчь» լրագրում «Lex Տիմօշկին» վերնագրի տակ: Նահանգական դատարանը դատապարտել էր Եաբլօնօվսկիին երկու ամսվայ բանտարկութեան. պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երգչուհի Վան-Բրանդ կիրակի օր հանդէս եկաւ Լիւչիայի դերում նոյնանուն օպերայի մէջ: Դա մի նոր առիթ էր շնորհալի երգչուհու համար ցոյց տալու իր ախորժելի, երաժշտական ձայնը, իր գեղեցիկ, ճաշակով, տպաւորիչ երգեցողութիւնը և իր զգացված խաղը:

Նոյն օրը ցերեկով «Հէնզել և Գրետել» օպերայում հանդէս եկաւ երգչուհի Արդ՝ տղայի դերում և ունեցաւ մեծ աջողութիւն թէ իր երգով և թէ իր աշխոյժ և բնորոշ խաղով:

Ցերեկվայ ներկայացման մի բաժինն էլ կազմում էին Կրիլօվի առակները՝ վերածված դերերի և երգեցողութեան: Մանկական հասարակութիւնը, որ հաւաքվել էր ներկայացմանը, մեծ հետաքրքրութեամբ հետևում էր առակների կատարման: Նրանցից համեմատաբար աւելի աջողութիւն ունեցան «Քառեակը» և «Էշն ու սոխակը», առաջինը թէ երաժշտութեան և թէ խաղի կազմուածքով, երկրորդը հաճելի երաժշտութեամբ, որի մէջ տեղ են գտել դայլայլիկներ և գեղգեղանքներ: Միրոզ

—

Մօզդոկ, 24 յունվարի

Յունվարի 21-ին տեղիս եկ.-ծխ. դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ համերգ երկսեռ քառաձայն խմբով՝ ղեկավարութեամբ վերոյիշեալ դպրոցի ուսուցիչ-խմբապետ Յովհաննիսեանի, յօգուտ Կ. Հ. Բ. Ը. տեղիս ճիւղի:

Համերգը բաղկացած էր երկու բաժնից: Առաջին բաժնում երգեցին «Ո՜վ Տէր գըթած», «Ինձ մի խնդրիր», «Ո՜վ հայոց քաջեր», և «Պէյշա» օպերետայից մի քանի կտորներ:

Երկրորդ բաժնում երգեցին «Ոհ, ինչ անոյշ», «Արևն ելաւ», «Իմ չինարի» և «Շէն մնայ միշտ» «Լօէնգրէն» օպերայից:

Խմբական երգեցողութիւնների ընթացքում մէջ ընդ մէջ լինում էին սօլօ երգեր: Սօլօ երգողներից ոմանք աջող էին, իսկ ոմանք թոյլ:

Բոլոր երգերին դաշնակի նուագումով ընկերակցում էր տ. Մ. Գանջումեանցը: Օր. Թուշմալեանը, որը ուսանում է Մօսկվայի դրամատիքական կուրսերում և մօտ օրերս եկել էր այստեղ, արտասանեց ռուսերէն «Каменьщикъ» մելօդեկլամացիան:

Համերգից յետոյ դրվեցին երկու վօդըվիլներ՝ 1) հայերէն «Ըստ յայտարարութեան» և 2) ռուսերէն «Визитъ его превосходительства»:

Վօդըվիլները անցան բաւարար:

Համերգը՝ շնորհիւ բազմակողմանի ծրագրի, գրաւել էր ահագին բազմութիւն: Դահլիճը ծայրէ ի ծայր լի էր:

Ընդհանուր մուտքը 300 ր. է, ծախսը մօտ 100 ր.: Զուտ արդիւնք կը մնայ երևի 180 ր., որը չը տեսնված բան է Մօզդոկում հայկական ներկայացումներին:

Հայերէն վօդըվիլը խաղալիս յանկարծ դահլիճում իրարանցում սկսվեց: Կանանցից ոմանք ուշագնաց եղան: Կարգը վերականգնելուց յետոյ պարզվեց, որ նոր գիսաւորն է փայլել երկնակամարում...

Պէտք է նկատել, որ պարտաճանաչութիւն չը կայ մեր սիրողների մէջ: Ահա երրորդ ամիսն է, ինչ Յովհաննիսեանն ամեն ճիգ ու ջանք գործ էր դնում համերգին աջող ելք տալու, սակայն երգիչներն ու սիրողներն ինչ-ինչ պատճառներից դրդված մերթ հրաժարվում էին դերերից ու չէին յաճախում երգեցողութեան փորձերին:

Արտակ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, 5 փետրվարի

Մօտ օրերս բարեկամիս մէկը բերում է ինձ մօտ «Հովիւի» տարւոյս № 3-ը և ցոյց է տալի այնտեղ հիւրամեծարված «Բաթումցի» ստորագրութեամբ ինձ ուղղված բաց նամակը: Ինչպէս կը յիշեն ընթերցողները՝ անցեալ տարի «Մշակի» մէջ հանդէս հանելով «Հովիւի» խմբագիր Եղնիկ քահանայի այն տգեղ վարմունքը, որ իր թերթի մէջ տեղ է տալի իմ մասին այլ և այլ զրպարտութիւնների, բայց մերժում է տպելու իմ հերքումները, ես հրապարակով յայտնեցի, որ ինձ համար մեռած եմ համարում «Հովիւը» և բնաւ չեմ արժանացնի պատասխանի, ինչ էլ որ գրելու լինի այսուհետեւ իմ մասին: Դրանից յետոյ հէնց այն օրերում, ինչպէս և նկատել էր «Մշակը» իր № 24-ում, երբ ես, հրապարակով իմ պարզ ստորագրութեամբ նշաւակութեան եմ տալի Վանքի միաբան Երզնկեան Եղնիկ և «Հովիւի» խմբագիր քահանայի վատթար վարմունքը, նա գտնում է «նման զնման սիրող» մի տէր-«Բաթումցի» և իմ դէմ կեղծ ստորագրութեամբ բաց նամակ է լոյս հանում: Այդ առիթով գալիս եմ յայտնելու ընթերցող հասարակութեանը, որ «Հովիւին» և Վանքի աւ. ք. տէր-Եղնիկին այն ժամանակ միայն արժանի կը համարեմ պատասխանի, երբ իր խմբագրատանը ծածկած իմ հերքումը իր աշխատակից կեղծանուն տէր «Բաթումցու» առաջվայ յերիւրանքի դէմ կը տպագրի և երբ իր քահանայական անունը իրան վերագրված վերջին ախտից պաշտօնական հեղինակաւոր վկայութեամբ կը մաքրի: Ապա թէ ոչ, գոնէ ներկայ րոպէներում, այլ և այլ տէր-«Բաթումցիներ» ու տէր-զեղծարարների յօդուածներն ու հարցումները չեն կարող ոչ իր համար նպաստաւոր և ոչ էլ ուրիշների համար քիչ շատ արժէքաւոր լինել: Սրանք ներկայ վայրկեաններում միայն գալիս են «Հովիւի» տէր-խմբագրի և Վանքի աւ. միաբանի ներքին մարդու... յատկութիւնները աւելի սուր գծերով ի տես դնելու և խորին արհամարհանքի արժանի կացութեան մէջ հաստատելու: Մեսրոպ աւ.-ք. Մելեան

—

Էջմիածին, 6 փետրվարի

Ճեմարանի վարչութեան կողմից խնդրում եմ «Մշակի» առաջիկայ համարներից մէկում տեղ տալ «Սուրհանդակի» № 63-ի առաջնորդողում և լուրերի բաժնում ճեմարանի մասին տուած սխալ տեղեկութիւնների հերքման:

Ճեմարանի սաները ուսումնական տարվայ սկզբից յաճախել են եկեղեցի և երգել են միաձայն, և այդ առիթով մինչև օրս չէ ստացվել Վեհափառ Հայրապետից կօնդակ: Յունվարի 8-ին Կոմիտաս վարդապետը, իբրև վանքի միաբան, այլ ոչ իբրև ճեմարանի ուսուցիչ, ստացել է Վեհափառ Հայրապետից բերանացի հրաման՝ կազմակերպել սաներից Մայր Տաճարի համար քառաձայն խումբ և այն կառավարել տօն ու կիրակի օրերը: Համաձայն այդ կարգադրութեան՝ ճեմարանի վարչութիւնը առանց «դասարան-դասարան» գնալու, վերակացուների միջոցով պատուիրել է երգիչներին որոշ ժամին լինել տաճարում: Անցեալ տարիների անբարեյաջող պայմանների շնորհիւ երգիչների քանակը ներկայումս պակասաւոր է, քիչ է և ձայն ունեցողների թիւը, այնպէս որ մի երկուսի բացակայութեան շնորհիւ երկու անգամ խումբը քառաձայնի տեղ երգել է միաձայն: Այդ «չարիքի» առաջն առնելը դժուարին է, քանի որ ձայնի մշակումը պահանջում է երկար ժամանակ, ձայն ունենալ նորմուտների համար պարտադիր դարձնելը անարդար կը լինէր, իսկ հիւանդութիւններն ու անակնկալ դէպքերը անխուսափելի են:

Հաւանական է, որ լրատուն թիւր տեղեկութիւն է ստացել այն կօնդակի մասին, որ վարչութիւնը ստացել է հոկտեմբերի 30-ին և որը վերաբերում է ամեն առաւօտ ու երեկոյ Մայր Տաճարը չորս սան ուղարկելուն իբրև փոխասացներ և ժամակալներ. այս հրամանը անշեղ կատարվում է մինչև օրս: Այդ կօնդակով վերացվում էր վերջին 4 տարվայ միջոցում ստեղծված իրերի դրութիւնը, որ լոկ շարունակութիւն էր Գարեգին վ. Յովսէփեանի տեսչութեան օրով՝ 1906 թ. մայիսին կայացած որոշման: Ահա այդ որոշումը.

«Նախագահ՝ Հ. Գարեգին վարդապետ, անդամք խորհրդոյ՝ Տ. Տ. Կարապետ, Երուանդ վարդապետք, շնորհ. Սմբատ սարկ., պ. պ. Աբեղեան, Յարութիւնեան, Յովհաննիսեան, Քիւրդեան, Տէր-Գէորգեան, Տէրեան, Ղազարեան: Բացակայք՝ Տ. Կոմիտաս վ., պ. պ. Տիգրանեան, Լեոնեան, Գրիգորեան: Քարտուղար՝ Գ. Ալթունեան:

«Յօդ. 5. Աշակերտների եկեղեցի գնալու մասին ուսուցչական ժողովի կողմից պէտք է խնդրել Վեհափառին, որ եթէ հնարաւոր է՝ աշակերտները խմբով եկեղեցի գնան կիրակի և տօն օրերին միայն, իսկ լի օրերի համար վանքն իր համար երգիչներ ունենայ: Այդ որոշումը կարևոր համարվեց թէ ճեմարանի կարգապահութեան և թէ աշակերտների մէջ պարտականութիւնների համաչափութիւն պահելու համար: Որոշումը անցաւ 7 ձայնով ընդդէմ 5-ի, որոնք պնդում էին, թէ եկեղեցի գնալն արգելք չէ հանդիսանում կարգապահութեան և առաջադիմութեան և թէ աշակերտները պարտաւոր են գնալ երգելու, որովհետև վայելում են Մայր Աթոռի բարիքները. այդ կարծիքն յայտնողների մէջ էր նաև Հ. Երուանդ վարդապետը»:

Այդ օրից սկսած իսպառ վերացել էր եկեղեցի յաճախելը և երգելը:

Չարամիտ զրպարտութիւն է, թէ որևէ պաշտօնեայ՝ լինի ուսուցիչ, լինի վերակացու՝ կուսակցական կամ հակակրօնական ոգով ազդել է կամ ազդում է սաների վրա. աւելի ևս քամահրելի է այն ակնարկը՝ թէ որևէ մէկը զբաղվում է մատնութիւններով չինօվնիկների մօտ և չարախօսութիւններով Վեհափառի մօտ: Ոչ ոք չէ կարող բերել այդպիսի մի դէպք թէկուզ իբրև նմուշ:

Պաշտօնակատար տեսչի՝

Մ. Թաթոսեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ներքին գործերի մինիստրութիւնը թոյլատրեց ապրիլի 20—25-ին

կանութեան մէջ: Այդտեղ, բնութեան կախարդիչ և հմայիչ գրկում, քաղաքի ունևոր դասակարգն, ամառային տօթ, շոգ ամիսներում իր ապաստարանն է գտնում, հանգստութիւն տալով իր վաստակած մարմին և ջղերին:

Մօսկվայի և Պետերբուրգի մէջ գտնվող գրեթէ ամբողջ տարածութեան վրա շարունակվում են միմեանց յաջորդելով ամարանոցները, տեղ-տեղ ընդհատվելով և նորից սկսվելով:

Մօսկվայից մեկնելու հետևեալ օրվայ առաւօտեան շատ վաղ՝ մեր գնացքը ժամանեց Պետերբուրգ՝ Ռուսաստանի հռչակաւոր այդ մայրաքաղաքը, քաղաքակրթութեան, լուսաւորութեան այդ խոշոր կենտրոնը: Վիթխարի, հսկայ քաղաքը դեռ նոր էր ազատվում իր նախորդ աշխատաւոր օրվայ քնից: Բազմաթիւ գործարանների աններդաշնակ սուլոցները, միախառնվելով օդի մէջ իրար հետ, աւետում, յայտարարում էին բանուոր դասակարգին աշխատաւոր օրվայ ժամը:

Կայարանի հանդէպ, ընդարձակ հրապարակի երկու կողմում, կանոնաւոր կարգով կանգնած, անհամբերութեամբ սպասում էին կառապանները՝ իրանց փայլուն, շքեղ կառքերով և գեղեցիկ, գեր ձիերով, որոնցից մէկի մէջ տեղաւորելով իմ ծանօթ ուսանողուհու իրերը և մտերմաբար սեղմելով միմեանց ձեռքը՝ մենք բաժանվեցինք այդտեղ միմեանցից:

Պետերբուրգից մինչև Իւրիեւ չափազանց յոգնած և անքուն լինելուս պատճառով գրեթէ քնած անցկացրի, ուստի և զրկված եմ հնարաւորութիւնից մի որևէ բան գրել այդ մասին: Ա. Աւետիքեան

Իւրիեւ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 24 յունվար

Թիւրքահայոց պատրիարք Դուրեան սրբազան՝ երկարատև հեռի մնալով պատրիարքական աթոռէն, ազգային գործերը կաղն ի կաղ առաջ երթալով՝ տխուր կացութիւնը աւելի ծանրաբեռն կըլլար: Բազմիցս փորձուեցաւ, որ հրաժարեալ պատրիարքը սփոփիչ գոհացումներով վերադառնայ իր պաշտօնին: Քաղաքական և ազգ. ժողովի պայմաններն ու պահանջները չհամաձայնեցան:

Եւ պատրիարքը իր հրաժարականի վրայ հաստատ մնաց:

Օսմանեան նախորդ վարչապետը՝ հրաժարած ատեն, տեղական մամուլը՝ միահամուռ՝ անոր մեզի հանդէպ բռնած քաղաքականութիւնը շատ պարսաւեց: Ես կը կասկածիմ, որ մեր տեղական պարբերական մամուլը՝ քաջատեղեակ ըլլայ Թիւրքիոյ ներքին քաղաքականութեան: Վարչապետն ամեն պարագային դիւանագիտական գաղտնապահութիւն մը ունի, որով կարելի չէ ըմբռնել անոր բարեկամութեան կամ թշնամութեան հանգամանքները կամ ճշդութիւնը:

Ահաւասիկ ապացոյց մը:

Այն օրերը, որ Հիլմի փաշա՝ նախորդ վարչապետը՝ հրաժարելով մեկնելու վրայ էր, տեղական մեր մամուլը ծանր ու անկշռադատ լեզուով կամբաստանէր հրաժարեալ վարչապետին մեզի հանդէպ բռնած քաղաքականութիւնը: Ու միևնոյն օրերը՝ զիս կը տեսնէ «La Patrie» տեղական ֆրանսերէն թերթի խմբագրապետը և զարմանքով կըսէ. «Իրօք տարօրինակ են սա մեր հայ խմբագիրները: Անվիճելի աղբիւրէ գիտեմ հաստատապէս, որ Հիլմի փաշան հրաժարած է ձեր պահանջներուն գոհացում չտրուելուն համար. նախորդ վարչապետը առաջարկած է, որ Ադանայի հայերը ջարդող թիւրքերէն գոնէ 120 հոգի կախաղան հանելու է, մանաւանդ անոնք, որ խիստ ծանր կերպով ամբաստանուած են: Եւ իրեն կը հակառակին. և ահա այդ իսկ պատճառով ան կը հրաժարի...»:

Պատճառներէն մէկն հրաժարականին՝ ինչու չըլլայ այդ օրինաւոր պահանջը:

Բնական է, որ օսմանեան դիւանագիտութիւնը տակաւին մեզի պայծառ չէ. նպաստաւոր կամ աննպաստ դատաստան մը կարելէն առաջ, միշտ գիտելու ենք, որ կրնանք սխալիլ: Դժբաղդաբար հոս մեր մէջ՝ դիւանագէտ գլուխներ չունինք, կար Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, հոյակապ մարդ մը, ան ալ զոհ գնաց նեղմիտ կուսակցական թթուած խնդիրներու: Հայը ժամանակին՝ երբ Նուպար փաշայէ մը չկրցաւ օգտուիլ, հիմա ալ պիտի չօգտուէր Նորատունկեանէ մը... Մենք սխալներէն օգուտ քաղել ալ չենք գիտեր:

Երկու օր առաջ, ազգ. երեսփոխանական ժողով մը գումարուելով, միաձայն հաւանութեամբ, հարկ անհրաժեշտ կը տեսնուի պատրիարքի հրաժարականը ետ առնելը. ու այդ առթիւ՝ երեսփոխան Հայկ Խօճասարեանի՝ վարչութեան քաղ. ժողովի կողմէ ներկայացուցած բանաձևը վիճաբանութեան նիւթ կըլլայ, և, ի միջի այլոց, ինչպէս գրեցին անկողմնակալ թերթեր, Մինաս Չերազ պերճախօս փաստերով խոհեմ ճանապարհը ցոյց տալով կը պնդէ պատրիարքի վերադարձը: Դիմադրութեան մէջ դիւանագիտութիւն մը չի տեսներ, վասն զի թշնամական կացութեամբ մեզի օգնութեան հասնող ոչ ուժ մը ունինք և ոչ ալ յոյս մը: Կիմացնէ, որ սխալ մըն էր արդէն հրաժարականը, վասն զի անով չէր որ հայերը կախաղան հանելէն ետ կեցաւ թիւրքը, ընդհակառակն հրաժարականէն վերջը՝ երկու հայ ևս կախաղան ելան: Ինքը կը պնդէ, որ պատրիարքական աթոռը բազմելու է դարձեալ միևնոյն սրբազան Դուրեան պատրիարքը, վասնզի այդ սիրուած անձնաւորութիւնը նկատի առնելու է, որ համայն հայութենէ կաթողիկոսական ընտրելի մըն է եղած:

Եւ հայրենասիրական վրէժխնդրութեամբ խանդավառ՝ Միսաք Սուրեան, ծայրայեղօրէն կը դիմադրէ բանաձևին, տէրութեան խոստումները գոհացուցիչ չի գտներ:

Ու հեգնօրէն երեսփոխան մը կըսէ:

— Կերևի օգնութեան հասցնելիք մարտանաւեր պատրաստ ունիս:

Սուրեան հայութեան կուրծքը կը ցուցնէ...

Ի վերջոյ, դաշնակցական ներկայացուցիչներն ալ բանաձևին համաձայն գտնուելով՝ քուէարկութեան կուգան. աննշան բացառութեամբ համամիտ՝ կորոշուի պատրիարքին դիմում ընել վերադառնալու համար իր աթոռը:

Այսօր ազգային ժողովի մայր դիւանը Կադը-գիւղ երթալով հրաժարեալ պատրիարքը իր աթոռը կը հրաւիրէ:

Նկատի առնելու է որ դաշնակցականները ոչ միայն չեն դիմադրեր, այլ բուռն կերպով պաշտպան կըլլան պատրիարքի վերադարձին, մինչդեռ ժողովուրդը համոզուած է որ հրաժարականի պատճառը նոյն իսկ դաշնակցական երեսփոխաններն են: Այս համոզումը և ներկայ փաստացի դիրքը հակասութիւններ են, որով զարմանքի արժանի...

Թողլով ի մի կողմ կուսակցական և անհատական ըմբռնումները, ժամանակն է որ պատրիարքարանը իր աթոռին վրայ ունենայ իր գլուխը. բնական է, որ Դուրեան սրբազան՝ անհատապէս մտածելով կրնայ բացարձակապէս հրաժարած մնալ և չը վերադառնալ իր աթոռը. սակայն անհատականութիւնը մէկ կողմ թողլով այսօր յանձն կառնէ դարձեալ սկսիլ իր պատրիարքութիւնը, միայն դիտել կուտայ, որ իր հրաժարականին պատճառն է Ադանայի թիւրք չարագործներն ըստ արդարութեան չպատժուելնին, և ատոր համար միշտ պիտի բողոքէ ու արդէն գրաւոր ընդարձակ բողոքագիր մը պատրաստած է, զոր իբր պատրիարք անձամբ պիտի տայ մեծ եպարքոսին: Ու երբ թիւրք վարչութիւնը չը կատարէ իր խոստումները, Դուրեան անդառնալիօրէն պիտի հրաժարի պատրիարքութենէն:

Վերջապէս կը գոցուի հրաժարականի խնդիրը: Յուսանք, որ թիւրք վարչութիւնը կըխրախուսէ Դուրեան սրբազանի այս ասպետական դիւանագիտութիւնը. ամեն կողմէ կը սպասուի, որ դիակներու բոլոր այրուած Ադանայի մէջ արդարութիւնը իր տեղը երթայ... Ե.

Պետերբուրգում գումարել էսպերանտիստների առաջին համառուսական համագումարը:

Յանկարծամահ եղան յայտնի կոլլէկցիոներ կամերհէր Դաշկով և լէյբ-բժիշկ Շերշևսկին:

Էմիրը Մեծ Իշխան Բորիս Վլադիմիրովիչին ընծայեց բուխարական բարձր տեսակի շքանշաններ, Մեծ Իշխան Անդրէյ Վլադիմիրովիչին՝ ոսկեզարդ մի Թուր:

ԲԱԳՈՒ: 92,000 րուբլու կեղծ հարիւրանոցներ տարածելու մէջ 14 մեղադրվողներից նահանգական դատարանը 3-ին դատապարտեց 4-ամեայ բանտարկութեան, 7-ին 3½ տարով, մէկին՝ 1 տարի և 7 ամսով. Մնացածներին արդարացրեց:

ԿՐՕՆՇՏԱԴ: Պաշտօնաթող գէն.-մայոր Մարկով, որ Կրօնշտադի նաւահանգստի գետինը փորելու աշխատանքների կառավարիչն է, յանձնվում է զինուորական-նահանգական դատարանի ձեռը՝ մեղադրվելով 226-դ և 228-դ յօդուածներով:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ: Առաւօտեան ժամը 4-ին պօստային գնացքի մէջ, երկու կայարանների միջև, 5 զինված չարագործներ լեռնահանքերի ակցիօներական ընկ. դրամատարից յափշտակեցին 11,000 րուբլի: Հրացանաձգութեան ժամանակ սպանվեցին մի պահակ և մի չարագործ. վիրաւորեց մի պահակ:

ԽԱՐԿՕՎ: Փետրվարի 5-ին երկու կայարանների միջև № 7 գնացքի մէջ 15 երիտասարդներ ներս խուժեցին ծառաների վագօնը, որով գնում էր փողերով մի դրամատար, նետեցին 3 ռումբ, որից պայթեց գանձարկղը և սպանվեց դրամատարը, և յափշտակեցին փողերը: Կողոպտիչները կանգնեցրին գնացքը և փախան մօտակայ անտառը: Ուղարկված են պահակներ:

ՓԱՐԻԶ: Հավասի գործակալութիւնը հաստատում է, որ «Գեներալ Շանզի» նաւի կապիտան Կայօլին սպանվել է Աբէշէի մօտերը տեղի ունեցած ճակատամարտում:

ԲԵՐԼԻՆ: Սանտ-Եագօյից ստացված տեղեկութիւնների համաձայն՝ բժիշկ Կուկը Կրէգ անուան տակ ապրում է այնտեղ կնոջ հետ:

7 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Տեղի ունեցաւ կոմս Շերեմետեվի 150-րդ յօբելեանական սիմֆօնիքական համերգը:

ՆԻԿՕԼԱՅԵՎ: Դումայի որոշմամբ դատարանին է յանձնվում քաղաքային բանկի վարչութիւնը զեղծումների համար:

ԿՐՕՆՇՏԱԴ: Նաւահանգստում հաստատվում է յատուկ ախտահանիչ մարմին: Կազմվեց յատուկ յանձնաժողով ծովային բժիշկներից:

Կ. ՊՈԼԻՍ: Թաղվեց Երուսաղէմի նախկին պատրիարք Նիկոդիմոսը: Ներկայ էին Չարիկովը և դեսպանատան անդամները:

ՓԱՐԻԶ: Դեսպան Նէլիդովի առողջութիւնը բաւարար է:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթեւեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.: Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.: Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ: Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.: Մարդատար ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում: Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.: Պօստային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.: Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.: Վերջին գնացքը չէ գնում Բաթում:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին: Վերջին գնացքը Բագու չէ գնում:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան:

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագօններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵԱՆ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

103. 0—15

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հիւանդանոց

Մշտական մահճակալներով
Թիֆլիս, Միխայլօվսկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59, տել. 1026

Հիւանդների ընդունելութիւն.

ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.:

Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ:

Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ:

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ:

Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ:

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժ. 11½—12½-ը, ներքին և երեխաների հիւանդութիւններ:

Ա. Դ. ԿԱԼՄԸԿՕՎՕ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ:

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով: Միկրօսկօպիական, բակտերօլօգիական և քիմիական հետազօտութիւններ: Ծաղկի պատուաստումն: Ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կ.: Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան: Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից

(կ. ե. ու.) 236. 100—95

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը:
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը:
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.

(ե. ու. կ.) 984. 100—55

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388

(օ. մ.) 1216. 100—68

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.

(ա. օ.) 1087. 100—74

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.

(օ. մ.) 1044. 100—75

ԲԺՇԿԱՊԵՏ

ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ

Մնալով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է ներքին եւ ջղային հիւանդներ:
Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—7 ժ.
Լերմօնտօվսկայա փողոց տուն 21, բն. № 2.
Տէլէֆօն № 221.

(օ. մ.) 1213. 35—28

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների: Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը:

Կսէնիևսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ: (ե. հ. շ.) 955. 100—56

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8

(օ. մ.) 783. 100—80

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

7 ՌՈՒԲ. 25 ԿՈՊԷԿՈՎ
ԵՐԿՈՒ ԶԳԵՍՏԱՑՈՒ!
Տղամարդու եւ կնոջ

Ձմերային կամ աշնանային զգեստի երկու կտոր՝ տղամարդկանց և կանանց՝ ուղարկվում է պօստով, առանց ճանապարհածախքի—2 ր. 75 կոպէկով: (Սիբիր հաշվւում է 85 կ.): Եթէ դուր չը գայ—ֆաբրիկան փողը վերադարձնում է: Տղամ. կտորը 4¼ արշ. անգլ. տրիկօ է, ամուր, բրդից, 2 արշ. լայնութեան, նորագոյն նկարներով, իսկ կան. կտորը 8 արշ. տրիկօ «ՖԼՕՐԻԴԱ», բրդից, մօդային նկարներով եւ էլեգանտ: Երկու կտորներն էլ ամեն տեսակ մուժ գոյների: Վերադիր վճ. ուղարկվելուց հաշվւում է 14 կ. յաւելումն (պօստային սակագին): Չորս եւ աւելի կտոր բերել տալուց՝ տղամ. իւրաքանչիւր կտորին կցվում է աստառացու, իսկ կանանց իւրաքանչիւր կտորին՝ կաշուէ գօտի—միանգամայն ձրի: Հասցէագրել. Экспедиціонный Домъ БЕРНШТЕЙНЪ и КОМ. Бѣлостокъ. И.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(9,13,18,20) (В. 10677) 138. 4—1

Ի՞ՆՉ ԲԱՆ Է «ՏՈՒՐԻՆ» ՇԷՎԻՕՏԸ

Տղամարդ. հագուստեղ. շրջանում նորութիւն է «Շէվիօտ Տուրինը»: Այնպիսի մի էժան գնով՝ ինչպիսին է 3 ր. 30 կ., լաւ տեսակինը՝ 3 ր. 95 կ.—ամբողջ 4¼ արշ. կտորի համար. իբրև տղամ. լրիւ զգեստացու կտորը ոչնչով չէ զանազանվում արշ. 3—4 ր. արժեցողից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տեսակի ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտ.: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առանց կանխավճ.: Երեք և աւելի կտոր պահանջելուց՝ իւրաքանչիւր կտորին կցվում է հարկաւոր քանակ. աստառացու ձրի: Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր.—եթէ չը հաւանվի՝ յետ է ընդունվում: Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ въ фабрику шерстяныхъ издѣлій З. РОЗЕНТАЛЯ, г. Лодзь.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(շ. ե. հ.) (В.2815.) 45. 16—8

XXVIII ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ** XXI ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

Հրատարակվում են նոյն, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր եւ եւրոպական ականաւոր գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների եւ գեղագէտների:

Դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների եւ հասարակ բաժանորդների համար՝ տարեկան 10 ր.: Արտասահման 18 ր. կամ 50 ֆր., իսկ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ունեցող ընտանիքներին ՀԻՆԳ ր.: Ներկայ 1910 թ. ընթացքում բաժանորդները ստանում են.

1) ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը, 2) ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը, 3) ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔԸ, 4) ՌՈՒՂ-ՋԱՊԱՀ, 5) ԳԵՂԱՓՆՋԻԿ, 6) ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Սանահնի վանքի դարաւոր հոյակապ սրբազան կամարների տակ, 7) Ս. ՍԱՀԱԿ, 8) Ս. ՄԵՍՐՈՊ, 9) ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, 10) ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ուղեւորութիւնը, 11) Ս. ԻՋՄԱՆ ՏԱՃԱՐԻ գեղջուկ կարը 18-րդ դարի վերջերում, 12) ԳԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ 1911 թ., 13) ՄԱՆԿԱՆՈՑՈՒՄ պիէս, 14) ՉԱՐԱՃՃԻ ԱՐՄՈՒՇԻԿԻ ճանապարհորդութիւններն ու արկածները, 15) ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ, տեղագրական, 16) 1910 թ. ապրիլի 23-ին ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ 1900 թ. 5000 ԲԱԺԱՆՈՐԴ. (№ №)-երի մէջ վիճակ գցվող 500 առարկաների 2 տոմս:

ՎԻՃԱԿ ԵՆ ԳՑՎԵԼՈՒ

արձաններ, գրքեր, պատկերներ, դպրոցական առարկաներ, սեղանի ընտիր կարգեր, ալբոմներ՝ պօստ-կարտերի եւ լուսանկարների համար, ժամացոյցներ՝ ծոցի, սեղանի վրա դնելու, պատի օրացոյցի համար ընտիր ռելիէֆ եւ փառահեղ կարտօններ, գրասեղանի զարդեր, օդանաւի մօդելներ եւ այլն, եւ այլն:

Այդ առարկաները անցած դեկտեմբերի մէկից Գրական-Գեղագիտական Սալօնում դրված էին ի ցոյց 1910 թ. բաժանորդագրվողների:

Վիճակահանութեան մասնակցում են անխտիր բոլոր բաժանորդները:

„Աղբիւր“ եւ „Տարազ“ միեւնոյն հասցէով ստացող բաժանորդներին տրվում է 2 № №, որոնք անուանական են (տպված հասցէները): Վիճակին մասնակցելու համար բաժանորդը չը պէտք է աւելորդ վճար անէ. վիճակահանութիւնը բոլորովին ՁՐԻ է:

ԱՊԱՌԻԿ կամ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ: Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮР-ТАРАЗ“.
Tiflis, Caucase, Direction „Agbur-Taraz.“

(շ. ե. հ.) 124. 10—3

---

2 ԶԳԵՍՏ 5 ր. 25 կ.

Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետեւեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս. տրիկօ տղամ զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր: 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր: Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կոպէկով: Ճանապարհածախքը 55 կոպ.: Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը մեր հաշւին: Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, въ фабрику Т-ва „Э Х О“.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(շ. ե. հ.) (В. 2831) 46. 17—8

! ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է !
2 ռուբ. 75 կոպէկով

ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճ. «ՏՐԻՈՒՄՖ» շէվիօտի մի ամբողջ կտոր 4¼ արշին տղամարդկանց զգեստի համար: Չը նայած ծայրայեղ էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի ամենալաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ: Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախքը 55 կ.: Երեք եւ աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշւին: Պահանջները հասցէագրել.

г. Лодзь, № 72 в., фабриканту
ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ

Թղթակցութիւնները ռուսերէն:

(փ. 9) (В.2761) 37. 3—3

Կովկ. Հայոց Հրատարակչ.
Ընկ. Կանոնադրութիւնը

կարելի է ստանալ և անդամ գրվել նաև «Մշակ» լրագրի խմբագրատանը:

Անդամավճարն է 3 րուբլի:

Անդամները ստանում են 3 ր. արժողութեան գրքեր՝ Ընկերութեան հրատարակութիւններից:

(օ. մ.) 143. 3—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:

Աւանդվում են՝ ռուս, հայ, գերման, լատին, և ֆրանսիական լեզուներ:

(ե. հ. կ.) 117: 20—5

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՆ

սրանով յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ կառուցվող երկաթուղու համար պահանջված

200,000 ՇՊԱԼՆԵՐԸ

կարելի է գնել ամենաձեռնտու պայմաններով ԽՕԹԱՅ և ԳԱՆՁԱՍԱՐԻ վանքական անտառներից: Ցանկացողները թող դիմեն կօնսիստօրիային՝ Շուշի:

Անդամ կօնսիստօրիայի՝
Սամուէլ քահ. Գասպարեան

(օ. մ.) 135. 6—3

ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԴԻՊՔ

7 ՌՈՒԲԼԻ 25 ԿՈՊԷԿՈՎ

ուղարկում ենք ձմեր 2 զգեստ, «ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏՐԻԿՕ» բրդից, ամուր և մօդային կտոր, 2 արշ լայն., 4¼ արշ. երկար. տղամ. ամբողջ զգեստի համար և 8 արշ. «ՏՐԻԿՕ ՊԱՆԱՄԱ» կանանց ամուր և էլեգանտ զգեստի համար, հանդերձ ճանապարհածախքով (առանց կանխավճ. և ռիսկի) չը հաւանված դէպքում ֆաբրիկան փողը վերադարձնում է: Վերադիր վճարի համար աւելորդ հաշվւում է 16 կոպ., իսկ Սիբիր 85 կ. աւելի: Հասցէագրել՝ Въ фабрику А КИВМАНА, Лодзь № 43.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(փ. 9) (В.6411) 74. 3—3

---

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ

Այդպիսի չեղած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործն. և գեղ. պիջակ՝ տարվայ ամեն սէզօնին յարմար: Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօդային, գործն. և ամուր կտորից՝ 2 ր.: Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.: 3 և աւելի առարկ. բերել տալուց՝ իմ հաշւին: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում: Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(ա. օ.) (В. 2782) 44. 33—15

Ուշադրաւ նորութիւն!



Աւելորդ փող մի ծախսէք այցելելու համար «Թատրօն-Իլլիւզիօնները», քանի որ հնարաւորութիւն ունէք նոյնը ձեր տներում սարքելու՝ առանց որևէ առանձին հմտութեան, տեղի ընտրութեան եւ այլ ուրիշ յարմարութիւնների, բերել տալով անմիջապէս մեր առևտրական տնից նոր կատարելագործված կինեմատօգրաֆիկական ապպարատ բոլոր անհրաժեշտ պարագաներով եւ ցուցմունքներով «Թատրօն-Իլլիւզիօն», Էդիսօնի սիստէմի, որով իւրաքանչիւրը կարող է իր ծանօթների, ազգականների և հիւրերի համար տալ ընտանեկան և հասարակական ներկայացումներ շարժվող կենդանի պատկերների, էկրանի վրա (ոչ մոգական), այն է՝ օպէրաներ, դրամաներ, ողբերգ., կոմիքական՝ զանազան բովանդակութեան, գիտական-կրօնական-պատմական նկարներ, նատուրայից վերցված պատկերներ, պարեր, մրցութիւններ, պատերազմական անցքեր և նատուրայից վերցված այլ հետաքրքրաշարժ պատկերներ.—Թագաւոր Կայսր Նիկօլայ II-ի տեսակցութիւնը գերմանական կայսրի հետ Նաւակայանում, Բէլէլում, «Շտանդարտ» զրօսանաւի վրա 1909 թ.: Պատկ. Ս. Գրքից՝ Հին և Նոր կտակարաններից—Պատմութիւնները, Յիսուս Քրիստոսի Ծնունդը, Չարչարանքը և Մահը: Տեսարաններ ռուս-եապօնական պատերազ[illegible] աշխարհահռչակ արձանները: Տեսար., տիպերը և կեանքը Իտալիայի, Նիդ[illegible] Սիբիրի եւ այլն: Սիբիրի երկաթուղու կառուցումը. վարպետների կեանքը: [illegible] ռազմափորձերը: Ցէպպէլին III-ի աչքը Թռիչքը իր աէրօպլանի վրա: [illegible] երկաթուղ. աղէտ եւ գծերի կարգի բերելը: Նիւ-Եորկի մեծ Թատրոնի հրդեհը [illegible] պատահար ցիրկում: Հէշտ ապրուստի սիրողները: Գերմանական կայսրի [illegible]: Օդաչուների յաղթանակը բէյմսում եւ այլն: «Թատրօն-Իլլիւզիօն» ապպարատը [illegible] ունի, որ իւրաքանչիւրը հէնց առաջին անգամից կարող է նրան գործադրել կարդալով կցված ձեռնարկը ռուսերէն լեզուով: Զանազան գոյներով պատկերները ստացվում են շատ որոշակի, տեսնվում են առանց ճպումների, մեծութ. էկրանի վրա 2×2 արշ., մի քանի 100 րուբլի արժեցող ապպարատների ճիշդ յատկութեան: Այդ ապպարատը յարմար է կէրօսինի, գազի եւ էլեկտ. լուսաւոր. համար: Պատկերների մէջ եղած դերերը կատարում են աշխարհածանօթ արտիստներ: Բերել տալով այդպիսի ապպարատ, դուք կարող էք ձեր բնակարանը եւ նման տեղերը դարձնել Թատրոն՝ չը խանգարելով կահ-կարասիքին եւ միևնոյն ժամանակ հրճւանք պատճառել հիւրերին, ծանօթներին եւ ազգականներին հետաքրք. ու գիտական գրադելիքներով: Որպէսզի կարելիութիւն տրված լինի Ռուսաստանի ամեն բնակչի ձեռք բերելու այդպիսի մի հետաքրք. նորութիւն, մենք նշանակել ենք չեղած էժան մի գին, այն է՝ ապպարատը 3 ժապաւէնով եւ 150 պատկերներով, բոլոր պարագաներով, «Լուսին» լամպայով՝ րէֆլէկտորով—9 ր. 50 կ.: Այդօրինակ ապպարատ մեծ դիրքով, № 2, գեղեցիկ շինուածք, բարձր տեսակի օբէկտիվով—14 ր. 35 կ.: Ապպարատ № 3, ամենամեծ տիպի, առանձին շինուածքով՝ 300 արշ. երկար. ունեցող ժապաւէնի համար, յղկված, մեխանիկ. եւ եռապակեայ օբէկտիվով 1 տեսակի, ձրիաբար կցված «Duplex» լամպայով եւ 6 հատ գոյնզգոյն ու 3 հատ լուսանկ. ժապաւէններով—գինը 30 րուբ.: Պատկերների առանձին ժապաւէններ՝ հատը 85 կ., 1 ր. 25 կ., 1 ր. 75 կ. եւ 2 ր. 50 կ.: Պատուէրներն ուղ. ենք վերադիր վճարով, առանց կանխավճ.: Ճանապարհ. եւ մաքս հաշվւում է. Եւր. Ռուսաստ. եւ Կովկաս 1 ր. 50 կ., (№ 3 ապպարատի համար՝ 2 ր. 50 կ.), Ասիական Ռուսաստ. 1 ր. 75 կ. Թանգ, Արեւել. Սիբիր 1 ր. Թանգ: Արեւել. Սիբիր № 3 ապպարատը առանց 10 րուբ. կանխավճ. չենք ուղարկում: Հասցէն (որը կարելի է կտրել եւ կցնել ծրարին կամ բացիկին)

Германія. БЕРЛИНЪ, Кантъ ул. № 120.
Торг. Домъ Х. ФИНКЕЛЬШТЕЙНЪ.

BERLIN, Kantstr, № 120.
H. FINKELSTEIN 116.

P. S. Բեռլին ուղարկվելիք նամակին պիտի կպցնել 10 կ. մարկա, իսկ բացիկին՝ 4 կ.: Մեր Թատրօն-Իլլիւզիօն կինեմատօգրաֆ-ապպարատը չը շփոթել ոչ մի բանի համար հարկաւոր չեկող մոգական լապտերների հետ, որոնք ցոյց են տալիս մութ պատկերներ:

Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով: (В. 6987) 95. 2—2


СЪ РАЗСРОЧКОЙ ПЛАТЕЖА
ВО ВСЕЙ РОССІИ БЕЗЪ ПОРУЧИТЕЛЕЙ
ГРАММОФОНЫ и ПАТЕФОНЫ
АДРЕСОВАТЬ: «ФРАНКО-РУССКІЙ
ГРАММОФОННЫЙ АУКЦІОНЪ»
Г.Г. ГРОДНА
ТРЕБУЙТЕ КАТАЛОГИ БЕЗПЛАТНО

(ե.) (В.7978) 102. 5—2

Լ. Լեալէի լաբօրատօրիայի Օրլէան քաղաքում (Ֆրանսիա)

ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԵՇԱՆԻ
(Iodhyrine du d-r Deschamp)
ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ
ՉԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ

որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով: Բժշկապետ Դեշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. Նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում:
Բժշկապետ Դեշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար:
Հեռացնում է չաղութիւնը աստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում:
Արկղիկի գինը, որ պարունակում է 60 դեղհատներ, արժէ 4 ր. 25 կոպ.:
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում:

Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում
Торговый Домъ ЛЮКСЕМБУРГЪ и К-о, Варшава. Журавья. 40.

(փ. 9. մ. 2, 20) (В. 2234) 30. 5—3

Մարտի 1-ին 1910 թ. խաղացվող 200,000 ր.!

կարող է ընկնել 1 փոխառութեան տոմսակ գնող անձին կանխավճար մուծնելով 5-ից մինչև 30 րուբլի

Մուծնելով 5 րուբ. գնող անձը մասնակցում է 1/100 բաժնին հարիւր տոմսակի:

Կանխավճարը մուծնելու օրից բոլոր տարած գումարները պատկանում են գնող անձին:

Банкирскій Домъ
ВАРШАВА, БРАТСКАЯ № 18.
Л. В. ЛАНДАУ и К°
Հասցէն հեռագիր. համար.
«ЛАНДАУБАНКЪ», ВАРШАВА.

Խաղացվելուց յետոյ տարած գումարների աղիւսակը կը տպվի այս միեւնոյն լրագրում:

(7, 9) (В. 9987) 134. 2—2

Типографія „Экономія“ Большая Банкская № 3.